**ՈՌԻԲԵՆ ՍԻՄՈՆՈՎ (20.03 (01.04) (1899-1968)**, հայազգի ռեժիսոր, բեմադրիչ, դերասան, մանկավարժ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1946 թ.) - *120-ամյակ*

**21.03**

*Պոեզիայի համաշխարհային օր*

**ԱՆՈՒՇԱՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ (1879-1954)**, դրամատուրգ, Երևանի կաշվի գործարանի կառավարիչ (1921-1929 թթ.), «Դիլիջան» առողջարանի տնօրեն (1933-1935 թթ.), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934-ից)- *140-ամյակ*

**22.03**

*Ջրի համաշխարհային օր*

**ԼԻԴԻԱ ՍԵՅՖՈՒԼԻՆԱ (22.03 (03.04) 1889-1954)**, ռուս գրող, լրագրող, գրադարանավար, մանկավարժ, դերասանուհի - *130-ամյակ*

**23.03**

*Օդերևութաբանության համաշխարհային օր*

**ԱԹԱՆԵՍ ՍԵՆԱԼ (ՆԱԼԲԱՆԴՅԱՆ) (1909-1970)**, բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1936-ից) - *110-ամյակ*

**ԳԱԼՈՒՍ ԿՅՈՒԼՊԵՆԿՅԱՆ (1869-1955)** բարեգործ, գործարար, ճարտարագետ, նավթագործ, “Turkish Petroleum”, “British Petroleum” նավթային ընկերությունների հիմնադիր, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ղեկավար (1930-1932 թթ.) - *150-ամյակ*

**ԳԵՎՈՐԳ ՍԱՆԱՍՅԱՆ (23.03 (05.04)1904-1976)**, կինոօպերատոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1963 թ.) - *115-ամյակ*

**ՉՈՎՅԱՆՆԵՍ ԶԱՐԻՖՅԱՆ (1879-1937)**, դերասան - *140-ամյակ*

**ՊԻԵՌ ՍԻՄՈՆ ԼԱՊԼԱՍ (1749-1827)**, ֆրանսիացի աստղագետ, մաթեմատիկոս, ֆիզիկոս, Փարիզի գիտությունների ակադեմիայի անդամ, հավանականությունների տեսության ստեղծողը - *270-ամյակ*

**ՏԻԳՐԱՆ ՊՈԼԱՏ (ՓՈԼԱԴ ՓՈԼԱԴՅԱՆ) (1874-1950)**, գեղանկարիչ, գրաֆիկ - *145-ամյակ*

### 24.03

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՔԻԵՎ (ԶԱՔՅԱՆ) (1874-1945)**, ճարտարագետ, ճարտարապետ, Դոնի Ռոստովի քաղաքագլուխ (1917 թ.), Երքաղշին հսկողության նախագահ (1930 թ.), Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1935-ից) - *145-ամյակ*

**ՄԱՐՏԻՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ (1954)**, երգահան, կիթառահար, գեղանկարիչ, ՀՀ նկարիչների միության անդամ (2006 թ.), ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2014 թ.) - *65-ամյակ*

**ՊԵՏԵՐ ՅՈՒՁԵՖ ՎԻԼՀԵԼՍ ԴԵԲԱՅ (1884-1966)**, ֆիզիկոս-տեսաբան, ԽՍՀՄ ԳԱ արտասահմանյան անդամ (1924 թ.), Բեռլինի Կայզեր-Վիլհելմ ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն (1935 թ.), Նոբելյան մրցանակի դափնեկիր քիմիայի բնագավառում (1936 թ.) - *135-ամյակ*

**ՍԵՊՈՒՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆ (1959)**, հոգևոր գործիչ, Հայաստանյազ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ - *60-ամյակ*

**ՍԻՄՈՆ ՍԻՄՈՆՅԱՆ (1914-1986)**, գրող, խմբագիր, հրատարակիչ, բանասեր, մանկավարժ, հրապարակախոս, Բեյրութի «Սփիւռք» շաբաթաթերթի, «Սեւան» ամսաթերթի հրատարակիչ, «Սեւան» տպագրատան հիմնադիր (1955 թ.), «Հասկ» թերթի խմբագիր - *105-ամյակ*

**ՈՒԻԼՅԱՄ ՄՈՐԻՍ (1834-1896)**, անգլիացի նկարիչ, գրող, արվեստի տեսաբան, հասարակական գործիչ, Հնագույն շենքերի պահպանության ընկերության հիմնադիր (1877 թ.), Քելմստոկյան

հրատարակության հիմնադիր (1890-1991 թթ.) - **185-ամյակ**

### 25.03

**ՅՈՒՐԻ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1944)**, կոմպոզիտոր, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության պատասխանատու քարտուղար (2004 թ.), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2012 թ.) - **75-ամյակ**

**ՍԱՐԱԿ Բ ԽԱՊԱՅԱՆ (1849-1939)**, Կիլիկիայի հայոց կաթողիկոս (1902-1939 թթ.), «Սիոն» անսագրի խմբագիր (1874-1879 թթ.) - **170-ամյակ**

**ՍԻՐԱՆՈՒՇ ՄԻՆԱՅԱՆ (1939)**, ֆիզիոլոգ, մանկավարժ, ՀՀ ֆիզիոլոգների միության նախագահության, Ուղեղի հետազոտության միջազգային կազմակերպության, Նյու Յորքի ԳԱ (1995թ.), Էկոլոգիայի և գործունեության անվտանգության միջազգային ակադեմիայի (1996 թ.) անդամ - **80-ամյակ**

### 26.03

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊԵՅՋԱՍ (ՈՒՄԵՂ ԲԵՀՁԱԴ)** (1809-1874), գեղանկարիչ - **210-ամյակ**

**ՅՈՒՐԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ (1939-2010)**, քանդակագործ, Հայաստանի նկարիչների միության անդամ (1970-ից) - **80-ամյակ**

### 27.03

**Թատրոնի համաշխարհային օր**

**ԺԻՐԱՅՐ ՂԱՂԱՍՅԱՆ (1964)**, ռեժիսոր, Երևանի մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար (1998-ից), Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահի տեղակալ (2011-2017 թթ.), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2009 թ.) - **55-ամյակ**

### 29.03

**ԵՂԻԱ ՏՆՏԵՍԱՅԱՆ (29.03 (10.04) 1834-1881)**, երաժիշտ, տեսա-

բան, տպարանատեր, հրատարակիչ, խմբագիր, ազգային-հասարակական գործիչ, Կ. Պոլսի Երաժշտական քննիչ հանձնաժողովի ատենապետ, շարականների առաջին գիտական ուսումնասիրողը, ազգային հոգևոր երաժշտության մասնագետ - **185-ամյակ**

### 30.03

**ՊՈԼ ՎԵՌԼԵՆ (1844-1896)**, ֆրանսիացի բանաստեղծ- **175-ամյակ**

**ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (1889-1934)**, թատերական գործիչ, ռեժիսոր, մանկավարժ, Ռուսաստանի լուսժողովրդատի թատերական բաժնի ազգային փոքրամասնությունների հանձնաժողովի նախագահ (1918-1922 թթ.), Մոսկվայի հայկական պետական դրամատիկական ստուդիայի հիմնադիր (1918 թ.), Աստրախանում, Նոր Նախիջևանում, Կրասնոդարում հայկական թատերախմբերի կազմակերպիչներից - **130-ամյակ**

**ՎԻԿՏՈՐ ՖԱՆԱՐՉՅԱՆ (1929-2003)**, ֆիզիոլոգ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1982 թ.), ՀՀ ԳԱԱ փոխնախագահ (1978-1990 թթ.), ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ (1994-ից), Նյու Յորքի ԳԱ իսկական անդամ (1995թ.), ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1999 թ.), «Արարատ» միջազգային ակադեմիայի (Փարիզ) պատվավոր անդամ (1991 թ.), Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի տնօրեն (1974-1978 թթ., 1989-2003 թթ.), ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1984 թ.), Վրացական ԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1980 թ.) - **90-ամյակ**

### 31.03

**ՌՈՒԲԵՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ (1939)**, ալտահար, կոմպոզիտոր, մանկավարժ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1983թ.), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2009 թ.) - **80-ամյակ**



## ԱՊՐԻԼ

### 1.04

**ՅՈՒՆԻՍԿՈՒՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ԿԱՂՋՎԱՆՑՅԱՆ) (1914-1994)**, բեմադրիչ, Երևանի Յ. Պարոնյանի անվան պետական երաժշտական թատրոնի ռեժիսոր (1957-ից), ՅԽՍՀ վաստակավոր (1945 թ.), ՅԽՍՀ ժողովրդական արտիստ (1958 թ.) - *105-ամյակ*

**ՍԻԼԱՆ ԿՈՒՆԴԵՐԱ (1929)**, չեխ գրող - *90-ամյակ*

**ՍԵՐՊԵՅ ՇԱՐՈՒՄՅԱՆ (1914-1977)**, պատմաբան, մանկավարժ, հասարակական գործիչ, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ (1974 թ.) - *105-ամյակ*

**ՎԱԶՐԻԿ ՍԵԿՈՅԱՆ (1909-1993)**, քաղաքական գործիչ, հիդրոշինարար, մանկավարժ, Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ (1952-1954 թթ.), ՅԽՍՀ շինանյութերի արդյունաբերության նախարար (1965-1973 թթ.) - *110-ամյակ*

### 2.04

*Առտիզմի մասին իրազեկության համաշխարհային օր*

**ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1909-1991)**, ամերիկահայ քանդակագործ, գեղանկարիչ, գրաֆիկ - *110-ամյակ*

**ՎՐԵԺ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ (1949-2013)**, արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, «Երկիր Ավետյաց» (1990-1991 թթ.), «Հայ զինվոր» (1993-1999թթ.) պարբերականների խմբագիր, ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչության պետ (1999-2009 թթ.), «Նաիրի» հրատարակչության տնօրեն (2010-2012 թթ.) - *70-ամյակ*

### 3.04

**ԱԴԵԼԱԻՂԱ ՔԱՐԱՄՅԱՆ (1939)**, աշխարհագրագետ, կլիմայաբան, մանկավարժ, խմբագիր, Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1980-ից) - *80-ամյակ*

**ԳԱԲՐԻԵԼ (ԲՅՈՒԶԱՆԴ) ՄԵՆԵՎԻՇՅԱՆ (03.04 (16.04) 1864-1936)**, լեզվաբան, հայագետ, մանկավարժ, հոգևոր գործիչ, Կ. Պոլսի Մխիթարյան դպրոցի տնօրեն (1913-ից), Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ (1882-ից), «Հանդես ամսօրեայ» հանդեսի խմբագիր (1895-1996 թթ.) - *155-ամյակ*

#### **4.04**

**ԳՐԻԳՈՐ (ԳԻԳՈ) ՇԱՐԲԱԲՉՅԱՆ (1884-1942)**, բեմանկարիչ, գեղանկարիչ, մանկավարժ, Հայ արվեստագետների միության (1916 թ.), «Հայարտուն» կազմակերպության (1921 թ.) հիմնադիր, Թբիլիսիի հայկական դրամատիկ թատրոնի գլխավոր նկարիչ (1921-ից), ՎեսՍՐ արվեստի վաստակավոր գործիչ (1936 թ.) - *135-ամյակ*

**ԴԱՎԻԹ ՄԱԼՅԱՆ (1904-1976)**, դերասան, Գ. Սունդուկյանի անվան թատրոնի տնօրեն (1952-1953 թթ.), ՀԽՍՐ վաստակավոր (1936 թ.), ԽՍՀՄ ժողովրդական (1943 թ.) արտիստ - *115-ամյակ*

#### **5.04**

**ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (05.04 (13.04) 1869-1936)**, դերասան, Հայաստանի ժողովրդական արտիստ (1934 թ.) - *150-ամյակ*

**ԼԵՎՈՆ ՋՈՒԼՅԱԼԱԿՅԱՆ (1964)**, հունահռոմեական ոճի ըմբիշ, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ, Եվրոպայի, աշխարհի (1986 թ.), օլիմպիական (1988 թ.) չեմպիոն, Եվրոպայի լավագույն ըմբիշ (1986 թ.) - *55-ամյակ*

#### **6.04**

**ԱՎԵՏԻՍ ՍՈՒՎԱԼՅԱՆ (1934-2006)**, բժիշկ, վնասվածքաբան, օրթոպեդ, ըմբիշ, ԽՍՀՄ սպորտի վարպետ (1958 թ.), հունահռոմեական ըմբշամարտի ՀԽՍՐ և Մոսկվայի բազմակի չեմպիոն (1954-1966 թթ.) - *85-ամյակ*

**ԼԵՎՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ (1924-2001)**, ճարտարապետ, ՀԽՍՐ վաստակավոր ճարտարապետ (1972 թ.) - *95-ամյակ*

**ԼԵՎՈՆ ՇԱՆԹ (ՆԱՐԱՇՊԵՏՅԱՆ) (1869-1951)**, դրամատուրգ, բա-

նաստեղծ, մանկավարժ, պետական, քաղաքական, կուսակցական, հասարակական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության խորհրդարանի փոխնախագահ, «Համազգային Կրթական եւ Մշակութային Միութեան» հիմնադիր (1928 թ.) - **150-ամյակ**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԻՎԱՆ) ՍԱՂԱՔՅԱՆ (1914-1982)**, երկրաբան, մանկավարժ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1948 թ.), ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ (1957-1982 թթ.), ՀԽՍՀ ԳԱ տեխնիկական գիտությունների (1962-1968 թթ.), Երկրի մասին գիտությունների բաժանմունքի (1969-1982 թթ.) ակադեմիկոս-քարտուղար, Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն (1963-1966 թթ.), ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1961 թ.) - **105-ամյակ**

**ՈԱԶՄԻԿ ԱՄԻՐԳՈՒԼՅԱՆ (1929-2012)**, դերասան, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1980 թ.) - **90-ամյակ**

## 7.04

### *Մայրության, գեղեցկության և սիրո տոն*

**ԶԵԿԻ ՉԱՆ (1954)**, դերասան, կասկադյոր, կինոռեժիսոր, պրոդյուսեր, սցենարիստ, մարտական տեսարանների, հնարքների բեմադրիչ, երգիչ- **65-ամյակ**

**ԱԳՆԵՍ ԶՈՒԿԻՄ (ԱՇԽԵՆ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ) (1854-1899)**, հայազգի այգեգործ, գիտնական, Սինգապուրի խորհրդանիշը հանդիսացող «Վանդա միսս Զոակիմ» խոլորձի հայտնի տեսակի հայտնաբերողը - **165-ամյակ**

**ԱՎԵՏ (ԱՎԴԵՅ) ԳԱՔՐԻԵԼՅԱՆ (ՏԵՐ-ԳԱՔՐԻԵԼՅԱՆ) (1899-1983)**, ջութակահար, մանկավարժ, Կոմիտասի անվան պետական լարային քառյակի հիմնադիր անդամներից (1924-1974 թթ.՝ առաջին ջութակ), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1945 թ.) - **120-ամյակ**

## **8. 04**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՓԱՆՈՍՅԱՆ (ԱԼՓԱՍԼԱՆ) (1859-1919)**, դրամատուրգ, բանաստեղծ, մանկագիր, թարգմանիչ, մանկավարժ - **160-ամյակ**

**ՍՈՒՐԵՆ ՍՈՒՐԵՆՅԱՆ (ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ) (1899-1938)**, դերասան, Բաքվի թատերախմբի կազմակերպիչ, Դիլիջանի լուսբաժնին կից թատերախմբի ղեկավար (1924 թ.) - **120-ամյակ**

## **9. 04**

**ՎԱԴԻՄ ԿՈԺԵՎՆԻԿՈՎ (9.04 (22.04) 1909-1984)**, ռուս գրող - **110-ամյակ**

## **12. 04**

**Տիեզերագնացության և ավիացիայի միջազգային օր**

**ԲԱԳՐԱՏ ԱԼԵՔՅԱՆ (1949)**, գրող, «Հայ գրող» թերթի հիմնադիր-խմբագիր, «Պարույր Սևակ» հրատարակչության տնօրեն (1993-1996 թթ.), ՀԳՄ հրատարակչության տնօրեն (2002-2016 թթ.), Հայաստանի գրողների միության անդամ (1988 թ.) - **70-ամյակ**

**ԻՈՍԵԲ ԳՐԻՇԱՇՎԻԼԻ (12.04 (24.04) 1889-1965)**, վրացի բանաստեղծ, գրականագետ, Վրաստանի ժողովրդական բանաստեղծ (1959 թ.), ՎՍՍՀ ԳԱ ակադեմիկոս (1946 թ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945 թ.) - **130-ամյակ**

**ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ (1954)**, ՀՀ պետական, քաղաքական, հասարակական գործիչ, ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ սոցիալական ապահովության (1996-1998 թթ.), ՀՀ Սփյուռքի (2008-2018 թթ.) նախարար - **65-ամյակ**

**ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏԻՍՅԱՆ (ԹԵՐԼԵՄԵՁՅԱՆ) (1864-1896)**, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, լրագրող, «Արմենական» կուսակցության հիմնադիրներից, Մարսելի «Հայաստան» թերթի հիմնադիրներից, Վանի ինքնապաշտպանության կազմակերպիչներից (1896 թ.) - **155-ամյակ**

**ՆԻԿՈԼԱՅ ՊՐԺԵՎԱԼՍԿԻ (1839-1888)**, ռուս աշխարհագրագետ, ճանապարհորդ, Կենտրոնական Ասիայի հետազոտող, գեներալ-մայոր, Ս. Պետերբուրգի ԳԱ պատվավոր անդամ (1878-ից), Ռուսական աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ (1880-ից) - *180-ամյակ*

**ՍԵՐԳԵՅ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1934 -2016)**, երկրաբան, մանկավարժ, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն (1987-1992թթ.), Կիրառական երկաքիմիայի միջազգային ընկերակցության նախագահ (1993-ից), ՀՀ ԳԱԱ երկրի մասին գիտությունների պրոբլեմային խորհրդի նախագահ (1999-ից), ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ (2000-ից), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1990թ.) - *85-ամյակ*

**ՍԵՐՈԲ ՍԱՐԳՍՅԱՆ (1909-1990)**, դրամատուրգ, թատերագետ, խմբագիր, մշակութային գործիչ - *110-ամյակ*

**ՎԱՀԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ (1884-1959)**, դերասան, ռեժիսոր, ՎԽՄՅ վաստակավոր արտիստ (1939 թ.) - *135-ամյակ*

**ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ (1864-1920)**, գրող, հասարակական-քաղաքական, մշակութային գործիչ, գրաքննադատ, ազգագրագետ, խմբագիր, մանկավարժ, թարգմանիչ - *155-ամյակ*

#### **13.04**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԲԵԼՅԱՆ (13.04 (25.04) 1849-1921)**, քիմիկոս, Ցյուրիխի հայ գաղութի պատվավոր նախագահ - *170-ամյակ*

#### **14.04**

**ԱՌՆՈԼԴ ԹՈՅՆԲԻ (1889-1975)**, անգլիացի պատմաբան, պատմության փիլիսոփա, մանկավարժ, մշակութաբան, սոցիոլոգ, քաղաքակրթության տեսության մշակողներից - *130-ամյակ*

**ԳԵՎՈՐԳ ԲՈՒՐՋԱԼՅԱՆ (1869-1924)**, դերասան, ռեժիսոր, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի հիմնադիր անդամ, թատրոնի 4-րդ ստուդիայի ղեկավար (1921 թ.)- *150-ամյակ*

**ԿԱՐԱՊԵՏ ՈՍԿՅԱՆ (1869-1901)**, բանաստեղծ, արձակագիր - *150-ամյակ*

**ՀԱՍՈ ՍԱՐՅԱՆ (ՀՄԱՅԱԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ) (1914-1993)**, բանաստեղծ, «Գրական թերթ»-ի գլխավոր խմբագիր (1965-1967 թթ.) - *105-ամյակ*

**ՋՈՎՀԱՆՆԵՍ ՋՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (14.04 (26.04) 1864-1929)**, բանաստեղծ, մանկավարժ, Բաքվի կոմունայի (1918 թ.), Վաղարշապատի գավառի լուսբաժնի վարիչ - *155-ամյակ*

**ՎԱՐՐԱՍ ԳԱՅՖԵՃՅԱՆ (ԳԱՅՖԵՋՅԱՆ) (1879-1960)**, գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1954 թ.) - *140-ամյակ*

## **15.04**

**ԱՆՆԱ ԱՐԱՄԵԼԻՔ-ԼԱԶԱՐԵՎԱ (ԼԱԶԱՐՅԱՆ) (ԲԱՐԱՏԻՆՍԿԱՅԱ) (1814-1889)**, մշակութային, հասարակական գործիչ, իշխանուհի, թարգմանչուհի - *205-ամյակ*

**ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻ (ՈՍՏԱՆԻԿ ԱՂՈՅԱՆ) (1904-1948)**, գեղանկարիչ, 20-րդ դարի արևմտակա ինպրեսիոնիզմի հիմնադիրներից, սյուրռեալիզմի ներկայացուցիչ - *115-ամյակ*

**ԱՐՏԱՎԱԶԴ ԲԱՅԱԹՅԱՆ (1954)**, երգիչ, երգահան, սցենարիստ, ռեժիսոր, բեմադրիչ, «Արձագանք» պրոդյուսերական կենտրոնի հիմնադիրներից (1992 թ.) - *65-ամյակ*

**ԵՐՎԱՆԴ ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ (1949)**, գրականագետ, Հայաստանի գրողների, նկարիչների, ժուռնալիստների միությունների անդամ, ՀՀ ժուռնալիստների միջազգային վարչության անդամ (2004 թ.) - *70-ամյակ*

**ՆՈՒՊԱՐ ԱԿԻՇՅԱՆ (1934-1994)**, գրող, հրապարակախոս - *85-ամյակ*

**ՍՏԵՓԱՆ ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ (1924-1998)**, պատմաբան, մանկա-

վարժ - *95-ամյակ*

**ՎԵԼԻԽԱՆ ՎԱԼԵՍՅԱՆ (1914-1977)**, ճարտարագետ, շինարար, ՅՄՍՅ գիտությունների վաստակավոր գործիչ (1965 թ.) - *105-ամյակ*

**ԲԵՆՈՒՐ ՓԱՇԱՅԱՆ (1959)**, ընթիշ, մարզիչ, ԽՍՀՄ երիտասարդական (1977-1979 թթ.), համաշխարհային ուսանողական խաղերի (1981 թ.) հաղթող, աշխարհի գավաթակիր (1982 թ.), Եվրոպայի (1981-1982 թթ.), աշխարհի (1982-1983 թթ.) խաղերի չեմպիոն, Յայաստանի հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի հավաքականի գլխավոր մարզիչ (1986-1989 թթ), ՅԱՕԿ-ի նախագահ (1999-2000 թթ.), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1982 թ.) - *60-ամյակ*

**16.04**

**ԱՆԱՏՈՒ ԶՐԱՆՍ (ԶՐԱՆՍՈՒԿ ԱՆԱՏՈՒ ՏԻԲՈ) (1844-1924)**, ֆրանսիացի գրող, հայագետ, գրաքննադատ, ակադեմիկոս, գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր (1921 թ.) - *175-ամյակ*

**ԳԱԲՐԻԵԼ ՏԵՐ-ՄԻՔԵԼՅԱՆ (ՏԵՐ-ՄԻՔԵԼՈՎ) (16.04 (28.04) 1874-1949)**, ճարտարապետ, ԽՍՀՄ ճարտարապետական ակադեմիայի թղթակից անդամ (1937 թ.), Թբիլիսիի Գեղարվեստի ակադեմիայի պրոֆեսոր (1926 թ.), ՎԽՄՅ արվեստի վաստակավոր գործիչ (1937 թ.) - *145-ամյակ*

**ԵՐՎԱՆԴ ՄԵԼՔՈՆՅԱՆ (1944-1997)**, թարգմանիչ, մանկավարժ, հրատարակիչ, բարերար, մշակութային գործիչ, «Էջմիածին» ամսագրի խմբագիր (1985-1993 թթ.), Լիբանանում ՅՅ արտակարգ և լիազոր դեսպան (1996-1997 թթ.) - *75-ամյակ*

**ԵՐՎԱՆԴ ՍԱՅՈՒՈՒՆԻ (ՏԵՐ-ՅԱԿՈԲՅԱՆ) (1894-1967)**, կոմպոզիտոր, մանկավարժ, Յյուսիսային Կովկասի առաջին ազգագրական անսամբլի հիմնադիր (1930 թ.), ՅԽՄՅ ժողովրդական արտիստ (1964 թ.) - *125-ամյակ*

**ԶԱՐԼԶ (ԶԱՐԼԻ) ԶԱՊԼԻՆ (1889-1977)**, ամերիկացի դերասան,

կինոռեժիսոր, կոմպոզիտոր, պրոդյուսեր, սցենարիստ - **130-ամյակ**

**ՍՏԵՓԱՆ ԷՔՇՅԱՆ (1834-1901)**, դերասան, բեմադրիչ, թարգմանիչ - **185-ամյակ**

#### **17.04**

**ԱՐԱՄԱՅԻՍ ԵՂԻՊԱՐՅԱՆ (1924-2011)**, ճարտարագետ, էլեկտրաքիմիկոս, ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ - **95-ամյակ**

**ՀԱՅԿ ՂԱՎԹՅԱՆ (1919-1983)**, գրականագետ, մատենագետ, թրքագետ, թարգմանիչ - **100-ամյակ**

**ՍԱՐԻԱՆՆԱ ԿՈՇԿԱՐՅԱՆ (1959)**, փիլիսոփա, գրող, Ամերիկյան փիլիսոփայական ասոցիացիայի, Ատլանտայի Հայկական անկախ նշակութային ասոցիացիայի, «SDA di. M.F. Sciacca» «Arcipelago» փիլիսոփայական միջազգային միությունների անդամ - **60-ամյակ**

**ՌՈՋԱ ԵՂԻԱՋԱՐՅԱՆ (1949)**, արձակագիր, հրապարակախոս, մանկագիր, ՀՀ Գրողների միության անդամ (2007թ. ) - **70-ամյակ**

#### **18.04**

**ԱՆԱՀԻՏ ՍԱՎԱՅԱՆ (1944-2013)**, գեղանկարչուհի, խեցեգործ, մանկավարժ - **75-ամյակ**

**ԱՆԻԿ (ԱՆԱՀԻՏ) ՄԿՐՏՈՒՄՅԱՆ (1904-1970)**, դերասանուհի, Լեւինականի պետական դրամատիկական թատրոնի հիմնադիրներից (1928 թ.), ՀԽՍՀ վաստակավոր (1951 թ.), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1961 թ.) - **115-ամյակ**

**ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1914-2008)**, բանաստեղծ- **105-ամյակ**

**ԱՐՏՅՈՍ ԳԵՈՂԵԿՅԱՆ (1914-1997)**, երկրաբան, ՌԳԱ Երկրի մասին գիտությունների բաժանմունքի նախագահ, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1979 թ.) - **105-ամյակ**



**ՀԱՆՐԻ ՀԵՐՈՆ (1894-1981)**, նկարիչ, «Նկարչություն և պոեզիա», «Նոր սերունդ» (1935 թ.), «Օնիրիստ» (1949 թ.) խմբակցությունների հիմնադիր - *125-ամյակ*

**ՆԻՆԱ ՏԵՐ-ՕՍԻՊՅԱՆ (1909-2002)**, դերասանուհի, Ռուսաստանի վաստակավոր (1954 թ.), ժողովրդական արտիստ (1972 թ.) - *110-ամյակ*

#### 19.04

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿԱՍՅԱՆ (1934)**, ճարտարագետ, մեխանիկ, «Կոմուտատոր» ԱՄՅԿԲ գլխավոր կոնստրուկտոր (1962-1979 թթ.), Ռիգայի «Հատուկ պողպատ» կոնստրուկցիայի գործարանի գլխավոր ճարտարագետ (1967-1969 թթ.), «Բազալտ» սարքաշինական գործարանի տնօրեն (1979-1988 թթ.), «Ազատ» ԳԱՄԻ գլխավոր տնօրեն (1994-ից) - *85-ամյակ*

**ԱՎԳՈՒՍՏ ՎԻԼՀԵԼՄ ԻՖԼԱՆԴ (1759-1814)**, գերմանացի դերասան, դրամատուրգ, ռեժիսոր - *260-ամյակ*

#### 20.04

**ՂԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ (ՉՊՈՒԳՔՅԱՐՅԱՆ) (1884-1915)**, արևմտահայ բանաստեղծ, գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, «Սեհեան» ամսագրի հիմնադիրներից (1914 թ.), «Նավասարդ» տարեգրքի խմբագիրներից, Մեծ եղեռնի զոհ - *135-ամյակ*

**ՊՈՂՈՍ ՄԱԿԻՆՅԱՆ (1884-1938)**, մշակութային, պետական, քաղաքական, գործիչ, դիվանագետ, գրաքննադատ, հրապարակախոս, թարգմանիչ, «Գարուն» ավմանախի խմբագիր-կազմողներից (1910-1912 թթ.) - *135-ամյակ*

**ՎԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ (1959)**, մաթեմատիկոս, ՀՀ տեսական և կիրառական մեխանիկայի ազգային կոմիտեի անդամ, «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն (2004-2007 թթ.), ՀՀ ԳԱԱ նախագահության սփյուռքի բաժնի պետ (2009-ից) - *60-ամյակ*

## **21.04**

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ (1914-1997)**, պատմաբան, կուսակցական, պետական գործիչ, խմբագիր, ՀԽՍՐ մշակույթի նախարար (1966-1967 թթ.), ՀԽՍՐ Նախարարների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեի նախագահ (1985-1988 թթ.) - **105-ամյակ**

**ՄԱՔՍ ՎԵԲԵՐ (1864-1920)**, գերմանացի սոցիոլոգ, տնտեսագետ, պատմաբան, իրավաբան - **155-ամյակ**

**ՅՈՒՐԻ ՅՈՒՐՈՎՍԿԻ (ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ) (1894-1959)**, դերասան, բեմադրիչ, ԽՍՐՄ պետական մրցանակակիր (1950 թ.), Լատվիայի ժողովրդական արտիստ (1951թ. ), ԽՍՐՄ ժողովրդական արտիստ (1956 թ.) - **125-ամյակ**

**ՌՈՒԲԵՆՍ ՉԻՆԱՐՈՎ (ՌՈՒԲԵՆ ՄՍԵՐՅԱՆ) (21.04 (03.05) 1869-1943)**, դերասան, դրամատուրգ, թարգմանիչ, ՌԽՖՍՐ վաստակավոր արտիստ (1935 թ.) - **150-ամյակ**

## **22.04**

**ԱՐԱՔՍ ԴՎԱԹՅԱՆ (1949-2010)**, օպերային երգչուհի (սոպրանո), մանկավարժ, ՀԽՍՐ վաստակավոր արտիստ (1987 թ.), Ռուսաստանի վաստակավոր արտիստ, ՀՀ ժողովրդական արտիստ (2004 թ.)- **70-ամյակ**

**ԱՐՇԱԿ ԱՂԱՍՅԱՆ (1884-1956)**, երաժշտագետ, մանկավարժ, Թիֆլիսի «Հայարտան» նախագահ (1921-1924 թթ.), Երևանի կոնսերվատորիայի տնօրեն (1924-1926 թթ.), ՀԽՍՐ արվեստի վաստակավոր գործիչ (1945 թ.) - **135-ամյակ**

**ԻՍԱՆՈՒԻԼ ԿԱՆՏ (1724-1804)**, գերմանացի փիլիսոփա, գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիրը - **295-ամյակ**

**ԼՅՈՒԴԿԻԳ ՌԵՆ (ԱՌՆՈԼԴ ՖՐԻԴՐԻԽ ՖԻԹ ՖՈՆ ԴՈԼՍԵՆԱՈՒ) (1889-1979)**, գերմանացի գրող, Գերմանիայի Արվեստի ակադեմիայի անդամ (1952 թ.) - **130-ամյակ**

## 23.04

### *Գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օր*

**ՌԻԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ (1564-1616)**, անգլիացի դրամատուրգ, թատերագիր, գրող, բանաստեղծ, «Գլոբուս» թատրոնի բաժնետերերից (1599 թ.) - **455-ամյակ**

## 24.04

### *Ցեղասպանության զոհերի հիշատակի օր*

**ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ (1949)**, փիլիսոփա, պետական, հասարակական, քաղաքական, կուսակցական գործիչ, ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ավստրիայում (1995 թ.) - **70-ամյակ**

**ՀԵՆՐԻԿ ՍԱՄՅԱՆ (1934-2014)**, գեղանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր (1983 թ.), ՀՀ ժողովրդական նկարիչ (2010 թ.) - **85-ամյակ**

**ՀՌԻՓՄԻՍԵ ՊՈՂՈՍՅԱՆ (ԱՍԻԼՅԱՆ) (24.04 (06.05) 1899-1972)**, բանաստեղծուհի, թարգմանչուհի, «Մանկական ծիլեր» ամսագրի գրական խմբագիր (1930-31թթ.), Հայաստանի գրողների միության մանկական բաժանմունքի նախագահ (1937-1938 թթ.), ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1967 թ.), ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - **120-ամյակ**

## 25.04

**ԱԲԵԼ ՄԻԻԹԱՐՅԱՆ (1804-1873)**, հայագետ, պատմաբան, թարգմանիչ, հոգևոր գործիչ, Տրապիզոնի հայոց հոգևոր առաջնորդ, «Թանգարան Հայկազեան» ընկերության հիմնադիր, «Արարատ» ամսագրի առաջին խմբագիր - **215-ամյակ**

**ՎԱՐԴԻԼԵՆ ԲԱԼՅԱՆ (1924)**, կոմպոզիտոր, Հայաստանի խորեոգրաֆիկ ուսումնարանի տնօրեն (1955-1961թթ.), Հայֆիլհարմոնիայի տնօրեն (1964-1966 թթ.), Ալ. Սպենդիարյանի անվան տուն-թանգարանի հիմնադիր-տնօրեն (1966-1972 թթ.), Հայաստանի ժողովրդական գործիքների համույթի գեղարվեստական ղեկավար, գլխավոր դիրիժոր (1981-1986 թթ.), Հայաստանի կոմպոզիտորների, ժուռնալիստների, Մոսկվայի հայերի միություն-

ների անդամ, Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի անդամ (2001-ից), «Հայաստան-Լիբանան» կազմակերպության նախագահ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (1990 թ.), ՀՀ ժողովրդական արտիստ (2011 թ.) - **95-ամյակ**

#### **26.04**

**ՆԱՐԵԿ ԴՈՒՐՅԱՆ (1959)**, դերասան, բեմադրիչ, դաշնակահար, «Բոհեմի թատերախումբ» միության հիմնադիր (1989 թ.), «Բոհեմ» թատրոնի հիմնադիր (2016 թ.) - **60-ամյակ**

**ՎԱՆԻԿ ՓԻԼՈՅԱՆ (1939-2003)**, լողորդ, մարզիչ, ԽՍՀՄ քառակի ռեկորդակիր, ՀԽՍՀ լողի հավաքականի մարզիչ (1958-1980 թթ.), ՀՀ սպորտկոմիտեի պետ (1990-2003 թթ.), ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ (1971 թ.), ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր աշխատող (2001 թ.) - **80-ամյակ**

#### **27.04**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ (1914-1984)**, բանաստեղծ - **105-ամյակ**

**ՎԱՐԱԳՆ ԿԱՐԵՆՑ (ԿԱՐԱՊԵՏՅԱՆ)(1924-1980)**, բանաստեղծ, թարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1954-ից) - **95-ամյակ**

#### **28.04**

**ԱՐՏԱՇԵՍ ԱՌԱՔԵԼՅԱՆ (28.04 (11.05) 1909-1993)**, տնտեսագետ, մանկավարժ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1960 թ.), ՀԽՍՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն (1960-1987 թթ.), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1970 թ.) - **110-ամյակ**

**ԱՐՈՒՄ ՈՍԿԱՆՅԱՆ (ԴԱՐՊԱՍՅԱՆ) (1889-1943)**, դերասանուհի, մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1935 թ.) - **130-ամյակ**

**ԳՈՒՐԳԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ (1919-2010)**, գրադարանավար, մատենագետ, մանկավարժ, Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանի մեթոդական բաժնի վարիչ (1957-ից) - **100-ամյակ**

**ԳՈՒՐԳԵՆ ՍԵՎԱԿ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) (1904-1981)**, լեզվաբան, հայագետ, մանկավարժ, տերմինաբանական կոմիտեի գիտական քարտուղար (1932-1940 թթ.), ՀՀ ԳԱԱ գիտատեխնիկական տերմինաբանության խորհրդի նախագահ (1969-1981 թթ.), ՀԽՍՀ ԳԱ իսկական անդամ (1971 թ.), ՀԽՍՀ (1961 թ.), ՎԽՍՀ (1970 թ.) գիտության վաստակավոր գործիչ - *115-ամյակ*

## 29.04

*Քիմիական պատերազմի զոհերի հիշատակի օր*

**ԲՈՐԻՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (1924 -1996)**, ճարտարագետ, սեյսմոլոգ, Երևանի ճարտարապետաշինարարական ինստիտուտի տնօրեն (1981 թ.), Ամերիկայի սեյսմոլոգների ակադեմիայի (1986 թ.), Միացյալ Նահանգների ճարտարագետների միության (1986 թ.), Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի (1994 թ.), անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ.) - *95-ամյակ*

**ՆԻԿՈՂԱՅՈՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ (1959)**, թավջութակահար, կոնտրաբասիստ - *60-ամյակ*

**ՍՄԲԱՏ ՓԱՆՈՍՅԱՆ (1909-1995)**, գրող - *110-ամյակ*

**ՎԱԼԵՆՏԻՆ ՊՈՂՊՈՍՈԳՈՎ (1924-1998)**, գեղանկարիչ, կինոռեժիսոր, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամ (1958-ից), Հայաստանի նկարիչների միության անդամ (1959-ից), «Ոզնի» շաբաթաթերթի հիմնադիրներից, Երևանի քաղխորհրդի գլխավոր նկարիչ (1960-1964 թթ.), ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1967 թ.) - *95-ամյակ*

**ՎԱՐԴԻՄԻՐ ՍԱՐՈՒԽԱՆՈՎ (1934-1999)**, հայագգի ռեժիսոր, օպերատոր, սցենարիստ, Գորկու անվան մանկապատանեկան կինոստուդիայի ռեժիսոր (1973-ից) - *85-ամյակ*

## 30.04

**ԼԵՄՎԵԼ ՎԱԼԵՍՅԱՆ (1929-2009)**, աշխարհագրագետ, ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (1985 թ.), Ռուսաստանի կրթության ակադեմիայի ակա-

դեմիկոս (1985 թ.), ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պատվավոր պրոֆեսոր, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր (1979-1987 թթ.), Հայկական աշխարհագրական ընկերության (1975 թ.), Միջազգային աշխարհագրական միության հայկական կոմիտեի (1996-ից) նախագահ - *90-ամյակ*

**ՊՈՂՈՍ ԱՖԵՅԱՆ (1924-1969)**, ռեժիսոր, բեմադրիչ, երգիչ, Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնի գլխավոր ռեժիսոր (1965-1966 թթ.) - *95-ամյակ*

## ՍԱՅԻՍ

### 1. 05

*Աշխատանքի և աշխատավորների միջազգային օր*

**ԱՆՈՒՇԱՎԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ (1914-1986)**, գեղանկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1971 թ.) - *105-ամյակ*

**ԱՐԱՍԱՅԻՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ (1909-1973)**, իրավաբան, ՀԽՍՀ վաստակավոր իրավաբան (1971 թ.) - *110-ամյակ*

**ԱՐՄԵՆ ԳԱԼՈՅԱՆ (1929-2012)**, կենսաքիմիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ.), «Նեյրոքիմիա» ամսագրի գլխավոր խմբագիր (1982-ից), Փորձարարական կենսաբանության ինստիտուտի տնօրեն (1979-1981 թթ.), ՀԽՍՀ ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտի տնօրեն (1982-2006 թթ.), ՌԴ գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ (2012 թ.), Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի նախագահ, Նեյրոքիմիկոսների միջազգային միության անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (2010 թ.) - *90-ամյակ*

**ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵԹՅԱՆ (1914-1993)**, բանասեր, մանկավարժ, գրականագետ - *105-ամյակ*

**ԹԵՄՈՍ ԿՈՈՆԱՐՈՍ (1909-1970)**, հույն գրող - *110-ամյակ*

**ՀՐԱԶՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ (1934-2009)**, բանաստեղծ, լրագրող, «Արցախ» գրահրատարակչության տնօրեն, «ՊՂԸՂ-Պոռլի» երգիծական հանդեսի գլխավոր խմբագիր, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1982-ից), ԼՂՀ նշակույթի վաստակավոր գործիչ (2005 թ.) - *85-ամյակ*

**ՌՈԶԻ ԱՐՄԵՆ (ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) (1939)**, ֆրանսահայ երգչուհի - *80-ամյակ*

**ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՆՅԱՆ (1914-1962)**, մարզիկ, ընթանարտի հանրապետական ֆեդերացիայի նախագահ (1957-1962 թթ.), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1952 թ.), ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ (1962 թ.) - *105-ամյակ*

## 2. 05

**ԼԵՎՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ (1939)**, ճարտարապետ, տիպային նախագծման արվեստանոցի տնօրեն (1993- 2000 թթ) - *80-ամյակ*

**ՍԿՐՏԻՉ ՍԱՐԳՍՅԱՆ (1924-2002)**, բանաստեղծ, արձակագիր, մանկավարժ, Հայաստանի գրողների միության անդամ (1958-ից), «Գրական թերթ»-ի գլխավոր խմբագիր (1959-1962 թթ.), «Հայպետհրատ»-ի գլխավոր խմբագիր (1962-1970 թթ.), Հայաստանի ժուռնալիստների միության անդամ (1960 թ.), ՀԽՍՀ նշակույթի վաստակավոր գործիչ (1975 թ.) - *95-ամյակ*

## 3. 05

*Մամուլի ազատության համաշխարհային օր*

**ԱՐՏԱՇԵՍ ԱՂԻԲԵԿ-ՄԵԼԻՔՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) (1884-1956)**, քիմիկոս-ճարտարագետ, Վանաձորի քիմիական գործարանի կազմակերպիչներից, գլխավոր ճարտարագետ, տեխնիկական տնօրեն (1933-1938 թթ.), ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի քիմիայի ինստիտուտի վերլուծական քիմիայի լաբորատորիայի հիմնադիր-ղեկավար (1945 թ.) - *135-ամյակ*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀԱՎՈՐՅԱՆ (1914-1990)**, ճարտարապետ, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1964 թ.) - *105-ամյակ*

**ՈԱԶՄԻԿ ԽՈՍՐՈՇՎ (1949)**, դերասան, ռեժիսոր, մանկավարժ, Հայաստանի թատերական գործիչների միության անդամ (1966 թ.), ՀՀ նախագահին կից ազգային փոքրամասնությունների մշակույթը համակարգող խորհրդի նախագահ, ՀՀ հանրային խորհրդի կրթության, գիտության և մշակույթի հանձնաժողովի անդամ, ՀՀ վաստակավոր արտիստ (2008 թ.) - **70-ամյակ**

#### **4. 05**

**ՂԱՎԻԹ ՕՔՐՈՅԱՆՑ (1874-1943)**, գեղանկարիչ, մանկավարժ, «Սափրիչ» երգիծական ամսագրի հրատարակիչ, պատկերազարդող (1906-1907 թթ.), «Շրջիկ ցուցահանդեսների նոր միություն» ընկերության կազմակերպիչ (1908 թ.), «Գեղարվեստի ակադեմիա»-յի հիմնադիր-ռեկտոր (1921 թ.) - **145-ամյակ**

**ԵՂԻՇԵ ՍԱՐՏԻԿՅԱՆ (1904-1988)**, արվեստաբան-նկարիչ, մանկավարժ, Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի պրոռեկտոր (1945-1954 թթ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961 թ.) - **115-ամյակ**

**ՏԱՏՅԱՆԱ ՍԱՍՈՅԼՈՎԱ (1934-2014)**, խորհրդային թատրոնի և կինոյի դերասանուհի, ՌՍՖՍՀ վաստակավոր արտիստ (1963 թ.), ՌԴ ժողովրդական արտիստ (1992 թ.) - **85-ամյակ**

#### **5. 05**

##### ***Մամուլի օր***

**ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՈՅԱՆ (1884-1939)**, արձակագիր, բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ, մանկավարժ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - **135-ամյակ**

**ԷՂԻԿ ԶՈՂՐԱԲՅԱՆ (1939-2013)**, պատմաբան, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի հիմնադիր - **80-ամյակ**

**ՌՈՒԲԵՆ (ՌՈՒԴԻԿ) ՀՈՎՍԵՓՅԱՆ (1939-2016)**, գրող, թարգմանիչ, Հայաստանի գրողների միության անդամ (1968 թ.), ՀԳՄ քարտուղար (1988-1989 թթ.), «Սովետական գրող» հրատարակչության (1982-1987թթ.), «Նորք» ամսագրի գլխավոր խմբագիր



(1989-ից), ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2014 թ.) - **80-ամյակ**

## **6. 05**

**ՋՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (1929-1985)**, պատմաբան, մանկավարժ, քաղաքական գործիչ, ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար (1975-1985 թթ.), ՀԽՍՀ մինիստրների խորհրդի հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի նախագահ (1966-1969 թթ.) - **90-ամյակ**

## **7. 05**

### ***Ռադիոյի օր***

**ԳԱՐԵԳԻՆ ԵՐԻՑՅԱՆ (1879-1966)**, թատերական նկարիչ, դրամատուրգ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1964 թ.)- **140-ամյակ**

**ՄԵԼԱՆՅԱ ԱԲՈՎՅԱՆ (1944)**, օպերային երգչուհի, սոպրանո - **75-ամյակ**

## **8.05**

### ***Երկրապահի օր***

### ***Շուշիի ազատագրման օր***

**ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ (1929 - 2017)**, գյուտարար, ավտոմոբիլային կոնստրուկտոր, «ԼԱԶ» մակնիշի ավտոբուսների «ընտանիքը» ստեղծող հեղինակներից, Ուկրաինայի տրանսպորտի ակադեմիայի իսկական անդամ, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, պատվավոր գյուտարար - **90-ամյակ**

## **9.05**

### ***Հաղթանակի և խաղաղության տոն***

**ԲՈՒԼՍ ՕԿՈՒՋԱՎԱ (1924-1997)**, ռուս բանաստեղծ, երգահան, գրող, վիպասան, սցենարիստ, խորհրդային շրջանի “ճարժ” ոճի

կատարող - *95-ամյակ*

**ԳՈՒՐԳԵՆ ԶՈՒԱԽՅԱՆ (1909-1992)**, ճարտարագետ, հասարակական, քաղաքական, պետական գործիչ, ՀԽՍՀ տեղական արդյունաբերության, ժողովմխորհրդի նախագահ (1941-1945 թթ.), Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի տնօրեն (1948-1955 թթ.), Երևանի քաղխորհրդի նախագահ (1955-1957 թթ.), ՀԽՍՀ ժողտնտխորհրդի նախագահ (1963-1966 թթ.), Միկրոէլեկտրոնիկայի ԳՀ տեխնոլոգիական ինստիտուտի հիմնադիրտնօրեն (1966-1974 թթ.), ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1964 թ.) - *110-ամյակ*

**10.05**

**ԶԱՐԴԱՏ (ԶԱՐԵՅ ՅԱԼՏՈԶՅԱՆ) (1924-2007)**, արևմտահայ բանաստեղծ, «Սան» պարբերականի խմբագիր - *95-ամյակ*

**ՀԱՅԿ ԴԱՆՁԱՍ (ԲԻՆԱՅԱՆ) (1899-1977)**, դերասան, բեմադրիչ, Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի թատրոնի (1942 թ.), օպերետային ժանրի հիմնադիրներից, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1950 թ.) - *120-ամյակ*

**ՏԻԳՐԱՆ ՇԱՄԻՐԻԱՆՅԱՆ (10.05 (22.05) 1899-1952)**, բեմադրիչ, դերասան, մանկավարժ, Մոսկվայի հայկական դրամատիկական ստուդիայի տնօրեն, գեղարվեստական ղեկավար (1937-1940 թթ.), Հայաստանի թատերական ընկերության նախագահ (1949-1952 թթ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1934 թ.), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1949 թ.) - *110-ամյակ*

**11.05**

**ԲԱԲԿԵՆ ԶԱՔԱՐՅԱՆ (1914-2004)**, գրադարանավար, մատենագետ, մանկավարժ, ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավար (1961 թ.) - *105-ամյակ*

**ԷԹԵԼ ԼԻԼԻԱՆ ՎՈՅՆԻՉ (1864-1960)**, անգլիացի գրող, կոմպոզիտոր - *155-ամյակ*

## 12.05

**ՋԵՆՐԻԿ ՍՄԲԱՏՅԱՆ** (1934), ջութակահար, մանկավարժ, Երևանի պետական կոնսերվատորիայի պրոռեկտոր (1995 թ.), ՋՅ վաստակավոր արտիստ (1974 թ.) - *85-ամյակ*

**ՍԱՄՎԵԼ ԱՊՐԻԿՅԱՆ** (1959), ֆիզիկոս, Տարածաշրջանային առաջատար գիտությունների և տեխնոլոգիաների կենտրոնի նախագահ (2002 թ.), ՋԱԷԿ-ի անվտանգության նախագծի ղեկավար (2002 թ.), ՆԱՏՕ-ի կենսաբանական, քիմիական, միջուկային համակարգչային ծրագրի ղեկավար (2003 թ.) - *60-ամյակ*

## 13.05

**ՎԱԶԱԳԱՆ ՋՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ** (1929-2008), մաթեմատիկոս, մանկավարժ, ՋՅ մանկավարժական (1997 թ.), մանկավարժական կրթության միջազգային (1998 թ.) ակադեմիաների անդամ - *90-ամյակ*

## 14.05

**ԱՐԳԱՐ ՋՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ** (1849-1904), հրապարակախոս, թարգմանիչ, հասարակական գործիչ, Թիֆլիսի հայկական թատրոնի տնօրեն (1879-1880 թթ.), «Թիֆլիսի հայերեն գրքերի հրատարակության ընկերության» հիմնադիր-նախագահ (1880-1989 թթ.), «Փորձ» հանդեսի (1876-1981 թթ.), «Արձագանք» պարբերաբերթի (1882-1998 թթ.) խմբագիր-հրատարակիչ – *170-ամյակ*

**ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ** (1904-1992), զինվորական գործիչ, Խորհրդային բանակի գեներալ-մայոր (1943 թ.), Սովետական Միության հերոս (1943 թ.) - *115-ամյակ*

**ԱՐՇԱՎԻՐ ՇԱՎԱՐՇՅԱՆ** (14.05 (26.05) 1884-1960), մանկավարժ, ՋԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1954 թ.) - *135-ամյակ*

**ՋՐԱԶՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** (1909-1979), գյուղատնտես, ՋԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1967 թ.) - *110-ամյակ*

**ՎԱՋԵ ՋԵՔԻՍՅԱՆ** (1914-1997), գեղանկարիչ, լուսանկարիչ - *105-ամյակ*

**ՕՆՆԻԿ ՍԱՐԳԻՍՅԱՆ (1914-1992)**, մանկավարժ, խմբագիր, գրականագետ, «Սէն ժոզէֆ», «Կիլիկեան», «Դէմիրճեան» վարժարանների տնօրեն (1956-1991 թթ.), «Շիրակ» ամսագրի հիմնադիր-խմբագիր - *105-ամյակ*

## 15.05

*Ընտանիքի միջազգային օր*

**ԱՇՈՏ ՂԱԶԱՐՅԱՆ (1949)**, դերասան, հաղորդավար, կատակերգու, երգիչ, ՀՀ վաստակավոր արտիստ (2005 թ.), ՀՀ ժողովրդական արտիստ (2014 թ.) - *70-ամյակ*

**ՀԱԿՈՐ ԱՆԱՍՅԱՆ (1904-1988)**, պատմաբան, բանասեր, աղբյուրագետ, մատենագետ, ձեռագրագետ, Լա Վեռնի ամերիկահայ միջազգային քոլեջի պատվավոր դոկտոր (1984 թ.) - *115-ամյակ*

**ՊԻԵՌ ԿՅՈՒՐԻ (1859-1906)**, ֆրանսիացի ֆիզիկոս, Նոբելյան մրցանակակիր (1903 թ.), Ֆրանսիայի ԳԱ անդամ (1905 թ.) - *160-ամյակ*

## 16.05

**ԱՐՏԱԿԱԶԴ (ՏԻԳՐԱՆ) ՍՅՈՒՐՄԵՅԱՆ (1889-1951)**, ձեռագրագետ, պատմաբան, բանասեր, մանկավարժ, հոգևոր գործիչ, Գոնիայի առաջնորդական փոխանորդ (1918 թ.), «Հայ քնար» (1906 թ.), «Սասուն» (1909 թ.), «Հայ խոսնակ» (1924-1925 թթ.) պարբերականների, «Տաթև» տարեցույցի (1925-1930 թթ.) հրատարակիչ-խմբագիր - *130-ամյակ*

**ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ (1909-1978)**, գրադարանավար, մանկավարժ, Երևանի քաղաքային գրադարանի (այժմ Ավ. Իսահակյանի անվան) վարիչ (1936 թ.), Երևանի գրադարանային տեխնիկումի տնօրեն (1939-1940 թթ.), Գիտական գրադարանների տեսուչ (1945 թ.), գրադարանային բաժնի պետ (1951 թ.) - *110-ամյակ*

**ՖՐԵԴԵՐԻԿ ՄԱԿԼԵՐ (1869-1938)**, ֆրանսիացի գիտնական, հայագետ, մանկավարժ, «Revue des Études Arméniens» ամսագրի

հրատարակիչ - *150-ամյակ*

**17.05**

*Յեռահաղորդակցման միջազգային օր*

**ԱՆԻՏԱ ԿՈՆՏԻ (ԿԱՐԱԳՈՇՅԱՆ) (1899-1997)**, ծովագնաց-օվկիանոսագետ, բնախույզ, լուսանկարիչ, առաջին կին օվկիանոսագետը - *130-ամյակ*

**ԺԱՆ ԳԱԲԵՆ (ԺԱՆ ԱԼԵՔՍԻՍ ՍՈՆԿՈՐԺԵ) (1904-1976)**, ֆրանսիացի դերասան - *115-ամյակ*

**ՍԱՀԱ ՕԳԱՆԵԶԱՇՎԻԼԻ (ԱԼԵՔՍԱՆԴՐ ՕՅԱՆՅԱՆ) (1889-1932)**, քանանչահար, երաժշտագետ, մանկավարժ, Երևանի ռադիոյի ժողգործիքների անսամբլի ղեկավար, Երևանի կոնսերվատորիայի «Արևելյան ֆակուլտետի» հիմնադիր (1926 թ.) - *130-ամյակ*

**18.05**

*Թանգարանների միջազգային օր*

**ԱՐՏՅՈՒՇԱ (ԱՐՏԱՇԵՍ) ԳՅՈՂԱԿՅԱՆ (1934-1995)**, դերասան, ՀՀ վաստակավոր արտիստ (1989 թ.) - *85-ամյակ*

**ԼՈԼԱ ԽՈՄՅԱՆՑ (1934-2004)**, էստրադային երգչուհի - *85-ամյակ*

**20.05**

**ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՀԽԱԹՈՒՆՅԱՆՑ (1799-1849)**, հոգևոր, մշակութային գործիչ, Էջմիածնի տպարանի կառավարիչ, Երևանի թեմի առաջնորդ - *220-ամյակ*

**ՄԻՒԱՅԻԼ ԳԼԻՆԿԱ (20.05 (01.06) 1804-1857)**, ռուս կոմպոզիտոր, ազգային դասական երաժշտության հիմնադիր-*215-ամյակ*

**ՍԱՐԳԻՍ ԳՈՒՐԶԱԴՅԱՆ (1929-2015)**, ճարտարապետ, «Հայպետնախագիծ» ինստիտուտի N 1 ճարտարապետական արվեստանոցի ղեկավար (1969-ից), «Հայնախագիծ» ԲԲԸ խորհրդի նա-

խազահ (1994 թ.), ճարտարապետության միջազգային ակադեմիայի պրոֆեսոր (2002 թ.), ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1970 թ.) - *90-ամյակ*

**ՎԻԿՏՈՐ ԼԱՆԳԼՈՒԿ (1829-1869)**, ֆրանսիացի արևելագետ, հայագետ, պատմաբան, հնագետ, դրամագետ - *190-ամյակ*

**ՕՆՈՐԵ ԴՐ ԲԱԼԶԱԿ (1799-1850)**, ֆրանսիացի գրող, վիպասան, Պատվո լեգեոնի շքանշանի ասպետ - *220-ամյակ*

## 21.05

**ԴԱՅԱՆԱ (ԱՆԱՀԻՏ) ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1934-2018)**, բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող, Հայաստանի գրողների միության արտասահմանյան անդամ - *85-ամյակ*

**ՇԱԼՎԱ ԴԱԴԻԱՆԻ (1874-1959)**, վրացի գրող, դրամատուրգ, թատերական գործիչ - *145-ամյակ*

## 22.05

**ԱՐԹՈՒՐ ԿՈՆԱՆ ԴՈՅԼ (1859-1930)**, անգլիացի գրող, պատմական, արկածային, գիտաֆանտաստիկ ժանրի ստղծագործող - *160-ամյակ*

**ԱՐԿԱԴԻ ՏԵՐ-ԹԱԴԵՎՈՍՅԱՆ (ԿՈՄԱՆԴՈՍ) (1939)**, ռազմական գործիչ, ՀՀ ՁՈԻ գեներալ-մայոր (1992 թ.), Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՀ պաշտպանության փոխնախարար (1992-2001 թթ.), Արցախի հերոս (2009 թ.) - *80-ամյակ*

**ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆ (1929-2003)**, կատակերգու-դերասան, «Փյունիկ» ստուդիայի հիմնադիր (1987 թ.), ՀՀ ժողովրդական արտիստ (1984 թ.) - *90-ամյակ*

**ԺԱՆ ՌԻՇԱՐ ԲԼՈԿ (1884-1947)**, ֆրանսիացի գրող, հրապարակախոս - *135-ամյակ*

**ԼԵՎՈՆ ՌՈՏԻՆՅԱՆ (ՌՈՏԻՆՅԱՆՑ) (22.05 (03.06) 1879-1964)**, քիմիկոս, մանկավարժ, ՀԽՍՀ ֆիզիկաքիմիական առաջին դպրոցի

հիմնադիր, ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ - **140-ամյակ**

**ՆՈՐԱՅՐ ԺԱՄՅԱՐՅԱՆ (1949)**, կոմպոզիտոր, դուդուկահար, բլուլահար, մանկավարժ, Հայաստանի ազգային նվագարանների երաժշտական դպրոցի տնօրեն (1999-2016 թթ.), ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2016 թ.) - **70-ամյակ**

**ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐ (ՇԱՀՆՈՒՐ ՎԱՂԻՆԱԿ ԱԶՆԱՎՈՒՐԵԱՆ) (1924-2018)**, ֆրանսահայ երգիչ, երգահան, գրող, կինոդերասան, հասարակական, քաղաքական գործիչ, Շվեյցարիայում Հայաստանի դեսպան, Ժնևի ՄԱԿ-ի գրասենյակում Հայաստանի մշտական ներկայացուցիչ, ՀՀ ազգային հերոս (2004 թ.) - **95-ամյակ**

**25.05**

**ԳՈՒՐԳԵՆ ՇԱՀՆԱԶ (ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ) (1914-1978)**, բանաստեղծ, մանկավարժ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1964-ից) - **105-ամյակ**

**ԱՐԹՈՒՐ (ՀԱՐՈՒԹՅՈՒՆ) ՓԱՓԱԶՅԱՆ (1954)**, դաշնակահար - **65-ամյակ**

**ԼԵՎՈՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ (1884-1968)**, դրամատուրգ, արձակագիր, թարգմանիչ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - **135-ամյակ**

**26.05**

*Ավարայրի ճակատամարտի օր*

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՊՈՒՇԿԻՆ (26.05 (06.06) 1799-1837)**, ռուս բանաստեղծ, գրող, դրամատուրգ - **220-ամյակ**

**28.05**

*Հայաստանի Առաջին Հանրապետության օր*

**ԳԵՈՐԳԻ ԱՍԱԹԻԱՆԻ (28.05 (10.06) 1914-1977)**, վրացի կինոռե-

Ժիսոր, կինոօպերատոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1967 թ.) - *105-ամյակ*

**29.05**

**ԳԱԲՐԻԵԼ ԱՐԵՎՅԱՆ (ԱԼԱՎԵՐԴՅԱՆ) (1914-1968)**, արձակագիր, լրագրող, «Պղնձի համար» թերթի գլխավոր խմբագիր (1954-1956 թթ.) - *105-ամյակ*

**31.05**

*Ծխելու դեմ պայքարի համաշխարհային օր*

**ՍԻՔԱՅԵԼ ՊՈՂՈՍՅԱՆ (1954)**, դերասան, սցենարիստ, ռեժիսոր, երգիչ, պրոդյուսեր, ՀՀ վաստակավոր արտիստ (2007 թ.), ՀՀ ժողովրդական արտիստ (2015 թ.) - *65-ամյակ*

**ՎԱՐԴԱՆ ՍԱԽՈՒՅԱՆ (1869-1937)**, ծովանկարիչ, Բեռլինի արվեստագետների միության անդամ (1904 թ.), Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանակիր (1925 թ.) - *150-ամյակ*

## ՀՈՒՆԻՍ

**1.06**

*Երեխաների իրավունքների պաշտպանության օր*

**ԱՐՍԵՆ ՀԱՅՐԻՅԱՆ (1929-2004)**, բժիշկ, սոցիոլոգ, ԽՍՀՄ-ում «Սանիտարական կուլտուրայի թանգարանի» կազմակերպիչ (1959 թ.), Հայաստանում առաջին Առողջության գյուղական կենտրոնի հիմնադիր (1987 թ.), ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (1988 թ.), ՀԽՍՀ վաստակավոր բժիշկ - *90-ամյակ*

**ԽԱՉԱՏՈՒՐ ԼԱԶԱՐՅԱՆ (1789-1871)**, ազգային-ազատագրական շարժման, մշակութային գործիչ, Լազարյան ճեմարանի հոգաբարձու: Նրա շնորհիվ Լազարյան ճեմարանը ճանաչվել է որպես Արևելյան լեզուների ինստիտուտ (1849 թ.) - *230-ամյակ*



## 2.06

**ՅՈՒՐԻ ԱՆԴՐՈՊՈՎ (02.06 (15.06) 1914-1984)**, կուսակցական, պետական գործիչ, ԽՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար (1982-1984 թթ.), ԽՍՀՄ դեսպան Յունգարիայում (1953-1957 թթ.), Պետական անվտանգության նախագահ (1967-ից) - *105-ամյակ*

## 3.06

**ԿԱՐԼԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ (1929-2008)**, գրականագետ, լրագրող, թարգմանիչ, կուսակցական, պետական գործիչ, ՀԽՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ (1963-1970 թթ.), ՀԿԿ կենտկոմի քարտուղար (1976 թ.) - *90-ամյակ*

## 4.06

**ՍԵՂԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ (1939)**, ֆիզքիմիկոս, Անօրգանական միացությունների բարձր ջերմաստիճանային սինթեզի և տեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ (1975-ից), ԱՄՆ-ի «Տարվա գիտնական» (2001 թ.) - *80-ամյակ*

## 5.06

**ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆ (ՃԱԼԱ) (1959)**, գեղանկարիչ, մանկավարժ - *60-ամյակ*

**ՍԵՐԳՈ (ՍԵՐԳԵՅ) ՄԻԿՈՅԱՆ (1929-2010)**, պատմաբան, միջազգայնագետ, “Латинская Америка” ամսագրի գլխավոր խմբագիր (1970-ից) - *90-ամյակ*

## 6.06

*ԱՐԱՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ծննդյան օրը (1903-1978)*

**ՀՐԱՅՐ ԽԱՆԵՂԱՆՅԱՆ (1939)**, օպերային երգիչ, տենոր, կոմպոզիտոր, գեղանկարիչ, մանկավարժ, Ուկրաինայի վաստակավոր արտիստ (1969 թ), Ուզբեկստանի (1974 թ.), Հյուսիսային Օսեթիայի (1999 թ.) ժողովրդական արտիստ - *80-ամյակ*

**ՍԵՐԳԵՅ ՈՒԻԲԻՆՇՏԵՅՆ (06.06 (18.06) 1889-1960)**, ռուս հոգե-

բան, ՄՄՅ ՊԱ թղթակից անդամ (1943 թ.), ՌՄՖՍՐ ՄԳԱ հոգեբանության ինստիտուտի տնօրեն (1942-1945 թթ.) - *130-ամյակ*

## 7.06

**ԽՈՋԱ ԱՐՄԱԴ ԱԲԲԱՍ (1914-1987)**, հնդիկ կինոռեժիսոր, սցենարիստ, գրող - *105-ամյակ*

**ԺԱՍՍԵՆ (ՄԱՐԻԱՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ) (07.06 (19.06) 1894-1978)**, դերասանուհի, ՅԽՍՐ ժողովրդական արտիստ (1963 թ.) - *125-ամյակ*

**ՎԻՐՋԻՆԻԱ ԱՊՊԱՐ (1909-1974)**, հայազգի բժիշկ-մանկաբարձ, ԱՄՆ Գիտությունների ակադեմիայի պատվավոր անդամ, «Ապգարի սանդղակ»-ի հիմնադիրը (1952 թ.) - *110-ամյակ*

## 8.06

**ՄՊԱՆՂԱՐ ՄՊԱՆՂԱՐՅԱՆ (1849-1922)**, խմբագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ, «Նոր Դար» թերթի հիմնադիր-խմբագիր (1883 թ.) - *170-ամյակ*

## 9.06

**ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽԱՏԻՍՅԱՆ (1864-1913)**, ճարտարագետ, հասարակական, քաղաքական գործիչ, նավթարդյունաբերության ճարտարագետ-քիմիկոս, ՅՅԴ կուսակցության հիմնադիր-անդամ, «Խատիսյան-Տուգբաշյան և ընկերություն» ֆիրմայի հիմնադիր, «Բաքվի հայոց կուլտուրական միության» հիմնադիր-նախագահ (1906-1913 թթ.) - *155-ամյակ*

**ՅՈՎԱԿ ԳԱԼՈՅԱՆ (1924-1992)**, դերասան, ՅԽՍՐ ժողովրդական արտիստ (1978 թ.) - *95-ամյակ*

## 10.06

**ԱՐԻՍ (ԱՐԻՍ ԱՐՍԵՆԻ) ԳՐԻԳՈՐՅԱՆ (1959)**, բանաստեղծ, արձակագիր, լրագրող, խմբագիր, ազատամարտիկ - *60-ամյակ*

**ԳՐԻԳՈՐ ՆԱԶԻԿՅԱՆ (1909-1982)**, մանկավարժ, «Ժողովրդի ձայն» (1930-1931 թթ.), «Նոր շարժում» (1931-1934 թթ.) թերթերի

խմբագիր, Հայաստանի ժողկրթության թանգարանի տնօրեն (1944-1950 թթ.) - **110-ամյակ**

**ՅՈՒՐԻ ԴԱՎԹՅԱՆ (1929)**, դիրիժոր, մանկավարժ, ՀՀ հեռուստա-ռադիոպետկոմի սիմֆոնիկ նվագախմբի գլխավոր դիրիժոր (1992-1994 թթ.), Երևանի օպերայի և բալետի թատրոնի գլխավոր դիրիժոր (1980-2000 թթ.), ՀՀ ժողովրդական արտիստ (1984 թ.) - **90-ամյակ**

**ՍԻԼՎԱ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ (1954)**, ասմուլնքող, դերասանուհի, ՀՀ վաստակավոր արտիստ ( 2008 թ.) - **65-ամյակ**

## 11.06

**ԱՆՆԱ ԱԽՄԱՏՈՎԱ (ԳՈՐԵՆԿՈ) (11.06 (23.06) 1889-1966)**, ռուս բանաստեղծուհի, գրականագետ, գրաքննադատ, թարգմանիչ - **130-ամյակ**

**ԷԼԵՆՈՐԱ ՓԻՐԱԴՊՎԱ (1929-2012)**, դաշնակահար, Ուկրաինայի վաստակավոր (1969 թ.), ժողովրդական (1998 թ.) արտիստ - **90-ամյակ**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՎԳԵՐՅԱՆ (1774-1854)**, լեզվաբան, բառարանագիր, թարգմանիչ, Մխիթարյան միաբանության անդամ - **245-ամյակ**

**ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (1879-1943)**, քանդակագործ - **140-ամյակ**

**ՌԻՆԱՐԴ ՇՏՐԱՈՒՄ (1864-1949)**, գերմանացի երգահան, դիրիժոր - **155-ամյակ**

**ՍԱԹԵՆԻԿ ՉՄՇԿՅԱՆ (ԵՂԻՍԱԲԵԹ ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄՅԱՆ) (1849-1907)**, դերասանուհի, երգչուհի, արևելահայ թատրոնի հիմնադիրներից - **170-ամյակ**

## 12.06

**ՄԱՐԻԱՆՆԱ ՍԵՂՄԱՐ (ԲՈՅԱԽՉԻԵՎԱ ) (12.06 (24.06) 1899-1958)**,

օպերային երգչուհի (մեցցո-սոպրանո), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1950 թ.) - *120-ամյակ*

**ՎԱՂԻՆԱԿ ՄԱՆՂԱԿՈՒՆԻ (1929-1990)**, նկարիչ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1971 թ.) - *90-ամյակ*

#### **14.06**

**ԵՐՎԱՆԴ ԳՈԶԱԲԱՇՅԱՆ (1939)**, քանդակագործ, հաստոցային և մոնումենտալ դեկորատիվ արվեստի ստեղծագործող - *80-ամյակ*

**ՀՐԱԶՅԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ (1919-2003)**, աշխարհագրագետ, ՀՀ բարձրագույն դպրոցի վաստակավոր գործիչ (1998 թ.) - *100-ամյակ*

**ՆԱԶԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ (1954)**, երաժշտագետ, պարային թերապիայի հատուկ համակարգի ստեղծող, Երևանի Գեղագիտական դաստիարակության հանրապետական կենտրոնի Երաժշտության և պլաստիկայի մանկական ստուդիայի կազմակերպիչ (1987 թ.) - *65-ամյակ*

**ՎԵՐԳԻՆԵ ԱՐԾՐՈՒՆԻ (1884-1966)**, երգչուհի, մանկավարժ - *135-ամյակ*

#### **15.06**

**ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ (ՔՈՉԱՐՅԱՆ) (15.06 (27.06) 1899-1979)**, նկարիչ, քանդակագործ, ՀԽՍՀ (1965 թ.), ԽՍՀՄ (1976 թ.) ժողովրդական նկարիչ - *120-ամյակ*

**ԵՓՐԵՄ ՍԱՎԱՅԱՆ (1909-1974)**, գեղանկարիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1960 թ.) - *110-ամյակ*

**ԼԵՎՈՆ ԲԼԲՈՒԼՅԱՆ (1949)**, բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, լրագրող, Հայաստանի գրողների (1986 թ.), ՀՀ լրագրողների միությունների անդամ, ՀԳՄ պոեզիայի բաժանմունքի համանախագահ (2001-ից), ՀԳՄ Համահայկական գրական հիմնադրամի տնօրեն, Գրողների միությունների միջազգային ընկեր-

րակցության նախագահության անդամ - *70-ամյակ*

**ՀԱՍԼԻԿ ՍԻԼՎԱՆՅԱՆ (1914-1999)**, մատենագետ, մանկավարժ, մեթոդիստ, թարգմանիչ, ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավար (1961 թ.) - *105-ամյակ*

**16.06**

**ԱՆԱՐԻՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ (1954)**, դաշնակահար, մանկավարժ, ՀՀ վաստակավոր արտիստ (2007թ.) - *60-ամյակ*

**17.06**

**ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃՅԱՆ (1879-1962)**, բանասեր, պատմաբան, մանկավարժ, հրատարակիչ, տպարանատեր, «Ազատ միտք» (Կահիրե) շաբաթաթերթի խմբագիր (1936-1937 թթ.)- *140-ամյակ*

**ՏԻՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ (1929-1984)**, շախմատիստ, շախմատի աշխարհի կրկնակի չեմպիոն (1963-1969 թթ.), շախմատի վերլուծաբան, միջազգային գրոսմայստեր (1952 թ.), «Շախմատային Մոսկվա» ամսագրի (1963-1966 թթ. ), «64» շաբաթաթերթի (1968-1977 թթ. ) գլխավոր խմբագիր, ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1960 թ. ) - *90-ամյակ*

**18.06**

**ՍԵՐՊԵՅ (ՍԵՐՊՈ) ԶԱՔԱՐԻԱԶԵ (18.06 (01.07) 1909-1971)**, վրացի դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1958 թ.) - *110-ամյակ*

**19.06**

**ԱՆՆԱ ԴՈՒՐԻՆՅԱՆ (1904-1983)**, պարուսույց, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1956 թ.) - *115-ամյակ*

**20.06**

**ԷՂՈՒՐՈՂ ԽԱՐԱԶՅԱՆ (1939)**, գեղանկարիչ, մանկավարժ, Հ. Մալյանի թատրոն-ստուդիայի գլխավոր նկարիչ (1981-1988 թթ.), Հայաստանի նկարիչների միության անդամ (1970-ից) - *80-ամյակ*

**ՄԵԼԻՍ ՍՈՎՍԻՍՅԱՆ (1929-2010)**, ֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի լաբորատորիայի վարիչ (1968-ից), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ.) - *90-ամյակ*  
**ՍԱՍՎԵԼ ՍԱՐՈՒԹՅԱՆ (1959)**, գեղանկարիչ - *60-ամյակ*

## 22.06

**ԳԱՌՆԻԿ ԱՆԱՆՅԱՆ (1934-2007)**, գրականագետ, հրապարակախոս, մանկավարժ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1974 թ.), ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի հիմնադիր դեկան, ԵՊՀ հրատարակչության տնօրեն (1977-1985 թթ.), «Ժուռնալիստիկա» տարեգրքի խմբագիր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2006 թ.) - *85-ամյակ*

**ՀԵՐՄԱՆ ՄԻՆԿՈՎՍԿԻ (1864-1909)**, գերմանացի մաթեմատիկոս, ֆիզիկոս, պրոֆեսոր - *155-ամյակ*

**ՍԱՐԻԱ ՉՄՇԿՅԱՆ-ԵՐՍՈԼԻՆՍԿԱՅԱ (1904-1990)**, դերասանուհի - *115-ամյակ*

**ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1944-2016)**, պատմաբան, աղբյուրագետ, մանկավարժ, «Ամենայն հայոց կաթողիկոսներ» հանրագիտարանի գլխավոր խմբագիր, ՀՀ վաստակավոր մանկավարժ (2009 թ.) - *75-ամյակ*

## 23.06

**ԳԱՐՈՒՇ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆ (1894-1967)**, կինոօպերատոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1944 թ.) - *125-ամյակ*

**ՂԱՎԻԹ ԶԱՎՐԻԵՎ (ԶԱՎՐԻՅԱՆ) (23.06 (05.07) 1889-1957)**, քիմիկոս, լեզվաբան, հնագետ, ԵՊՀ ռեկտոր (1921-1922 թթ.), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1939 թ.) - *130-ամյակ*

**ԹԵԼՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ (1934-1998)**, ճարտարապետ, «Երևաննախագիծ» ինստիտուտի գլխավոր ճարտարապետ (1964-1976 թթ.), Գեողեզիայի ինստիտուտի ճարտարապետական հուշարձանների չափագրության բաժնի հիմնադիր-դեկավար (1976-1979 թթ.) - *85-ամյակ*

**ՍՏԵՓԱՆ ՂԱՍԲԱՐՅԱՆ (1879-1948)**, քիմիկոս, մանկավարժ, ՅՍՍՀ ԳԱ թղթակից անդամ (1944 թ.), քիմիական պարբերականների առաջին գրադարանի հիմնադիր, օրգանական քիմիայի հիմնադիրը Հայաստանում, ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի նախագահության անդամ, ՅՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1935 թ.) - *140-ամյակ*

## **24.06**

**ՍԵՐԳԵՅ ԱՅՎԱԶՅԱՆ (1934)**, մաթեմատիկոս, տնտեսագետ, մանկավարժ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2008 թ.), Բարձրագույն դպրոցի միջազգային գիտությունների ակադեմիայի, Ամերիկայի վիճակագրական ընկերության անդամ, ՌԳԱ Կենտրոնական տնտեսագիտական-մաթեմատիկական ինստիտուտի փոխտնօրեն (2000-ից), ՌԴ գիտության վաստակավոր գործիչ (2002 թ.) - *85-ամյակ*

## **25.06**

**ԱՎՍԵԼ ԲԱՎՈՒՆՑ (ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹԵՎՈՍՅԱՆ) (25.06 (07.06) 1899-1937)**, արձակագիր, գրականագետ, կինոսցենարիստ, թարգմանիչ, գյուղատնտես, մանկավարժ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - *120-ամյակ*

**ՂԱՒՏՐԻ ՂԻՄՈՎ (1909-1966)**, բուլղարացի գրող, Բուլղարիայի գրողների միության նախագահ (1964-1966 թթ.) - *110-ամյակ*

**ՈՒՌԲԵՆ ՅՈԼՅԱՆ (25.06 (06.07) (1894-1955)**, վիրաբույժ, ԽՍՀՄ Բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ (1946 թ.), Հայաստանում արյան փոխներարկման գիտահետազոտական ինստիտուտի հիմնադիր (1947 թ., 1955-ից՝ Ռուբեն Յոլյանի անվան), ՀԽՍՀ վիրաբույժների ընկերության նախագահ (1937-1954 թթ.), վիրաբույժների համամիութենական ընկերության վարչության, վիրաբույժների միջազգային ընկերակցության (1953-1955 թթ.) անդամ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ - *125-ամյակ*

**ՎԱԼՏԵՐ ՖՐԻԴՐԻԽ ՀԵՐՄԱՆ ՆԵՈՆՍ (1864-1941)**, գերմանացի ֆիզիկոս, ֆիզքիմիկոս, Գյոթինգենի ֆիզիկաքիմիայի ինստի-

տուտի հիմնադիր (1896 թ.), Բեռլինի համալսարանի քիմիայի (1905-1922 թթ.), ֆիզիկայի (1924-1933 թթ.) ինստիտուտների տնօրեն, ԽՍՀՄ ԳԱ արտասահմանյան պատվավոր անդամ (1927թ.), արդի ֆիզիկական քիմիայի հիմնադիրներից, Նոբելյան մրցանակակիր (1920 թ.) - **155-ամյակ**

## **26.06**

**ԱԳՐԻՊԻՆԱ ՎԱԳԱՆՈՎԱ (1879-1951)**, պարուհի, պարուսույց, բալետմայստեր, ռուսական դասական բալետի հիմնադիրներից, Ռուսաստանի ժողովրդական արտիստ (1934 թ.) - **140-ամյակ**

**ԶԱՔԱՐ ԶԱՔԱՐՅԱՆ (1849-1923)**, գեղանկարիչ, նատյունորտի վարպետ, Ֆրանսիայի Պատվո լեգեոնի շքանշանակիր (1899 թ.) - **170-ամյակ**

## **27.06**

**ԵՐՎԱՆԴ ԹԱՂԻԱՆՈՍՅԱՆ (1864-1948)**, թարգմանիչ, խմբագիր, մանկավարժ, Ադրբեջանի խորհրդարանի անդամ, Հայաստանի օգնության կոմիտեի քարտուղար (1921 թ.), Հայաստանի հանրային պետական գրադարանի տնօրեն (1922-1928 թթ.) - **155-ամյակ**

**ՎԱՂԱՐՇԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ (1924-2004)**, նկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ (1956-ից), ՀՀ վաստակավոր նկարիչ (1980 թ.) - **95-ամյակ**

## **28.06**

**ԳԵՂԵՈՆ ՄԻՐԱՂՅԱՆ (1859-1919)**, դերասան, մանկավարժ, «Գեղարվեստ», «Մշակ», «Հուշարար» պարբերականների աշխատակից - **160-ամյակ**

**ԳԵՎՈՐԳ ԱՊՏՈՒԼԼԱՐ (ԱԲՂՈՒԼԼԱՐՅԱՆ) (1839-1918)**, լուսանկարիչ, արվեստագետ, Կ. Պոլսի լուսանկարչական կենտրոնի հիմնադիր - **180-ամյակ**

**ՄԱՆՈՒԿ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ (1934-1995)**, գրող, կինոսցենարիստ, Հայաստանի գրողների միության անդամ (1966 թ.) - **85-ամյակ**



## 29.06

**ՎԱՆ ԱՐՅԱՆ (ՎԻԼՅԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ) (1949)**, արձակագիր, բանաստեղծ, թարգմանիչ, «Վան Արյան» հրատարակչության հիմնադիր-ղեկավար (1994-ից), Հայաստանի գրողների միության անդամ (1991 թ.) - *70-ամյակ*

## 30.06

**ՍԵՐՃ ՍԱՐԳՍՅԱՆ (1954)**, պետական, քաղաքական, գործիչ, ՀՀ պաշտպանության նախարար (2000-2007 թթ.), ՀՀ վարչապետ (2007-2008 թթ.), ՀՀ երրորդ նախագահ (2008-2018 թթ.), ՀՀԿ նախագահ (2007-ից), Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահ, Արցախի հերոս - *65-ամյակ*

## ՀՈՒԼԻՍ

### 1.07

**ԱԼԻՍԻԱ ԹԵՐՁՅԱՆ (1934)**, կոմպոզիտոր, դաշնակահար, հասարակական գործիչ, “Gruppo Encuentros” ժամանակակից երաժշտական համույթի հիմնադիր-ղեկավար, “Argentine Music Council”-ի նախագահ, Արգենտինայի կոմպոզիտորների միության քարտուղար, Հարավային Ամերիկայի ժամանակակից երաժշտական ընկերության նախագահ - *85-ամյակ*

**ԱՐԵԳ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ (1939-2001)**, ճարտարապետ, «Երևան-նախագիծ» ինստիտուտի ճարտարապետական խմբի ղեկավար (1969-1972 թթ), նախագծի գլխավոր ճարտարապետ (1972-1985 թթ.) - *80-ամյակ*

**ՇԱՆԹ ՍԱՐԳՍՅԱՆ (1919-2000)**, նկարիչ, Գյումրիի Գեղարվեստի դպրոցի տնօրեն (1945-1978 թթ.), Հայաստանի նկարիչների միության Գյումրու մասնաճյուղի ղեկավար (1945-1977 թթ.), Հայաստանի ազգային պատկերասրահի մասնաճյուղի տնօրեն (1978-ից), ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1978 թ.) - *100-ամյակ*

**ՎԵՐԱ ՄՈՒԽԻՆԱ (1889-1953)**, ռուս քանդակագործ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1943 թ.), ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիա-

յի իսկական անդամ (1947 թ.) - *130-ամյակ*

## **2.07**

**ՔՐԻՍՏՈՖ ՎԻԼԻԲԱԼԴ ՊԼՅՈՒԿ (1714-1787)**, գերմանացի կոմպոզիտոր, դիրիժոր, երաժշտագետ - *305-ամյակ*

## **3.07**

**ՀԱՎՈՐ ՂԱԶԱՆՉՅԱՆ (1959)**, ռեժիսոր, Կապանի Ա. Շիրվանզադեի անվան (1984-1989 թթ.), Գյումրու Վ. Աճեմյանի անվան (1989-1996 թթ.), Երևանի Պատանի հանդիսատեսի (1997-ից) պետական թատրոնների տնօրեն, Երևանյան միջազգային թատերական «Արմնոնո», Շեքսպիրյան փառատոնի հիմնադիր-տնօրեն, թատրոնի միջազգային ինստիտուտի (ՅՈՒՆԵՍԿՕ) Հայաստանյան ազգային կենտրոնի հիմնադիր, տնօրեն (2004 թ.), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2006 թ.), Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ (2007-ից) - *60-ամյակ*

**ՄԻՏՐՈՖԱՆ ՊՅԱՏՆԻՑԿԻ (1864-1927)**, ռուս երաժիշտ, ռուսական ժողովրդական երգերի կատարող, հավաքող, ԽՍՀՄ վաստակավոր արտիստ (1925 թ.), Պյատնիցկու անվան ռուսական ժողովրդական պետական երգչախմբի ղեկավար (1910-1940 թթ.) - *155-ամյակ*

**ՈՌԻԲԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆ (1959)**, երաժշտագետ, մանկավարժ, ՀԽՍՀ կոմպոզիտորների միության ավագ խորհրդատու (1983-1985 թթ.), Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի փոխտնօրեն (1985-1988 թթ.), Հայհամերգին կից «Դերասան» համերգների կազմակերպչական կոոպերատիվի տնօրեն (1989-1993 թթ.), Կուլենկայի համալսարանի երաժշտական բաժնի տնօրեն (2004-2008 թթ.), Երևանի պետական կոնսերվատորիայի պրոռեկտոր (2011 թ.) - *60-ամյակ*

**ՍՈՖԱ ԱԶՆԱՈՒՐՅԱՆ (1959)**, կոմպոզիտոր, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միության անդամ (1998 թ.), Կոմիտասի անվան կոնսերվատորիայի «Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագիր (2000 թ.) - *60-ամյակ*

#### 4.07

**ԼՅՈՒԴՎԻԳ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (1939)**, լրագրող, գրականագետ, բանասեր, մանկագիր, Երևանի «Անանիա Շիրակացի» համալսարանի պրոռեկտոր, Հայաստանի գրողների միության անդամ (1984 թ.) - *80-ամյակ*

#### 5.07

*Սահմանադրության օր*

**ՊԱՐՈՒՅՐ ՀԱՅՐԻԿՅԱՆ (1949)**, քաղաքական գործիչ, գրող, երգահան, Խորհրդային Միության ժողովրդավարական շարժման հիմնադիր-ղեկավար, «Ազգային միացյալ կուսակցության» ղեկավար, «Ազգային ինքնորոշում» միավորման հիմնադիր-նախագահ (1987-ից) - *70-ամյակ*

#### 6.07

**ՄԱՐԻԱՍ ՄՈՃՈՈՅԱՆ (06.07 (19.07) 1904-1972)**, դերասանուհի, Վրաստանի ժողովրդական արտիստ (1958 թ.) - *115-ամյակ*

#### 7.07

**ԵԼԵՆԱ ՕԲՐԱԶՑՈՎԱ (1939-2015)**, ռուս օպերային երգչուհի (մեցցո-սոպրանո), դերասանուհի, օպերային ռեժիսոր, մանկավարժ, Ռուսաստանի մշակույթի ռուսական ակադեմիայի ակադեմիկոս (1999 թ.), ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1976 թ.) - *80-ամյակ*

**ԼԻՈՆ ՖՈՅԽՏՎԱՆԳԵՐ (1884-1958)**, ծագումով հրեա գերմանացի գրող, դրամատուրգ, թարգմանիչ, լրագրող - *135-ամյակ*

**ԿԱՐԻՆԵ ԽՈՒՂԱԲՆՅԱՆ (ՍԱՐԳՍՅԱՆ) (1929-2015)**, երաժշտագետ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի ավանդական երաժշտության միջազգային խորհրդի անդամ, ԽՍՀ կոմպոզիտորների և երաժշտագետների միության անդամ (1968-ից), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2013 թ.) - *90-ամյակ*

**ՌՈՒԲԵՐՏ ԿԱՐԱՅԱՆ (1934-2015)**, բանաստեղծ, արձակագիր, երգիծաբան, առակագիր, հրապարակախոս, Հեռուստատեսու-

թյան և ռադիոյի պետական կոմիտեի երիտասարդական հաղորդումների գլխավոր խմբագիր (1962-1972 թթ.), «Երասխ» թերթի գլխավոր խմբագիր (1983-1992 թթ.), Հայաստանի գրողների միության անդամ (1970 թ.), ՀՀ նշակույթի վաստակավոր գործիչ (2013 թ.) - *85-ամյակ*

## **8.07**

**ՀՐԱՆՏ ԲԱԳՐԱԶՅԱՆ (1914-1995)**, արձակագիր, դրամատուրգ, սցենարիստ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1973-ից), ՀԽՍՀ կինեմատոգրաֆիստների միության անդամ - *105-ամյակ*

**ՍՈՖԻ ԴԵՎՈՅԱՆ (1949)**, պարուհի, պարուսույց, դերասանուհի, Հայաստանի պարի պետական անսամբլի մենապարուհի (1967-1990 թթ.), «Հոգու և պարի թատրոն»-ի հիմնադիր-ղեկավար (1993 թ.), Մշակութային կենտրոնի հիմնադիր (1994 թ.), ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1984 թ.) - *70-ամյակ*

## **9.07**

**ԱՆՆԱ ՈՒԴԿԼԻՖ (1764-1823)**, անգլիացի գրող, վիպասան - *255-ամյակ*

**ԻՍԱՅԻ ՓԻԹԵՎ (ԷՍԱՅԻ ՓԻԹՅԱՆ) (1844-1904)**, թատերական գործիչ, Թիֆլիսի հայկական թատերական կոմիտեի հիմնադիրներից (1819 թ.), Թիֆլիսի Արտիստական ընկերության կազմակերպիչ (1887 թ.), վարչության նախագահ - *175-ամյակ*

**ՅԱՆ ՆԵՐՈՒՂԱ (1834-1891)**, չեխ գրող, բանաստեղծ, լրագրող, մանկավարժ, քննադատական ռեալիզմի ներկայացուցիչը Չեխիայում - *185-ամյակ*

**ՅՈՒՐԻ ՍԱՐՅԱՆ (ԿԱՐԱՊԵՏՅԱՆ) (1924-1976)**, արձակագիր, կինոսցենարիստ, «Հիդրոշինարար» թերթի խմբագիր (1969-ից), ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1962-ից) - *95-ամյակ*

**ՈՌՄԵՆ ԱՎԻՆՅԱՆ (1939-2008)**, դերասան, Հայաստանի վաստակավոր արտիստ (1990 թ.) - *80-ամյակ*

### **11.07**

**ՋԵՅՍՍ ԷՔԲՈՏ ՍԱՔ-ՆԵՅՆ ՈՒՒՍԹԼԵՐ (1834-1903)**, ամերիկացի նկարիչ, օֆորտի վարպետ, Պատվո լեգեոնի շքանշանակիր - **185-ամյակ**

**ՎԼԱԴԻՄԻՐ ՊԱԼԱԴԻՆ (11.07 (23.07) 1859-1922)**, ռուս բուսաբան, կենսաքիմիկոս, պրոֆեսոր, բույսերի ֆիզիոլոգների, կենսաքիմիկոսների ռուսական դպրոցի հիմնադիր, Ս. Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (1914 թ.) - **160-ամյակ**

### **12.07**

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼՓԻԱՐ (1864-1919)**, երգիծաբան, լրագրող, Կահիրեի «Փարոս» թերթի հրատարակիչ (1896-1898, 1901-1902 թթ.), Կ. Պոլսի ազգային պատրիարքարանի քարտուղար - **155-ամյակ**

### **13.07**

**ՎԱԼԵՆՏԻՆԱ ՆԵՐՍԻՍՅԱՆ (1924-2009)**, բժիշկ, արյունաբան, մանկավարժ, ՌԴ Բնական գիտությունների (1999 թ.), Նյու Յորքի գիտությունների ակադեմիայի (1996 թ.) ակադեմիկոս - **95-ամյակ**

### **14.07**

**ԺԻՐԱՅՐ ԱՆԱՆՅԱՆ (ՏԵՐ-ԱՆԱՆՅԱՆ) (1934-2004)**, դրամատուրգ, ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհաղորդումների պետական կոմիտեի գլխավոր խմբագիր (1959-1980 թթ.), ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1980-ից) - **85-ամյակ**

**ՍԱԹԵՎՈՍ ԴԱՐԲԻՆՅԱՆ (1889-1937)**, արձակագիր, դրամատուրգ, մանկավարժ, Վրաստանի «Հայ պատանի հանդիսատեսի» թատրոնի տնօրեն, «Կարմիր աքլոր» երգիծական հանդեսի հրատարակիչ (Թիֆլիս, 1921 թ.), ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - **130-ամյակ**

**ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ (ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ, ՆԵՄԵՍԻՍ) (1884-1983)**, գրող, փիլիսոփա, դրամատուրգ, թարգմանիչ, հասարա-

կական, քաղաքական գործիչ, «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամ, «Նեմեսիս» գործողության կազմակերպիչ - *135-ամյակ*

**ՊԻԵՌ ՔԻՅԱՌ (1864-1912)**, ֆրանսիացի բանաստեղծ, հասարակական գործիչ, լեզվաբան, լրագրող, դրամատուրգ, թարգմանիչ, հայագետ, ֆրանսիացի հայասերների շարժման հիմնադիր, Հայասերների եվրոպական կոնգրեսի կազմակերպիչ (1902 թ.), Մարդու իրավունքների լիգայի գլխավոր քարտուղար, «Պրոմյանենիա» ամսագրի գլխավոր խմբագիր (Փարիզ, 1900-1914 թթ.) - *155-ամյակ*

**ՋՈՒԼԻԵՏ ՂԱԶԱՐՅԱՆ (1934)**, թարգմանչուհի, խմբագիր, ՀԽՍՀ Գրողների միության անդամ (1982 թ.) - *85-ամյակ*

**ՌՈՒԶԱՆ ՍԱՐՅԱՆ (1959)**, արվեստաբան, բանասեր, հասարակական գործիչ, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն (2004-ից), ՀՀ նկարիչների միության անդամ (2006-ից) - *60-ամյակ*

## 15.07

**ԿԱՐՈ (ԿԱՐԱՊԵՏ) ՍԱՍՈՒՆԻ (1889-1977)**, պետական, հասարակական, քաղաքական, կուսակցական գործիչ, պատմաբան - *130-ամյակ*

**ՎԱԼՏԵՐ ԱՐԱՄՅԱՆ (1909-1994)**, արձակագիր, թարգմանիչ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1957-ից) - *110-ամյակ*

## 17.07

**ԱԶԱՏ ՎՇՏՈՒՆԻ (ԿԱՐԱՊԵՏ ՍԱՄԻԿՈՆՅԱՆ) (1894-1958)**, բանաստեղծ, գրական, հասարակական գործիչ, «Փարոս» հանդեսի հիմնադիր (1918-1919 թթ.), «Մուրճ» (Թիֆլիս, 1922 թ.), «Դիրքերում» (Թիֆլիս, 1924 թ.), «Մուրճ-մանգաղ» (Դոնի Ռոստով, 1926-1927 թթ), «Գեղարվեստի ֆրոնտում» (Երևան, 1930 թ.), «Խորհրդային արվեստ» (Երևան, 1932-1934 թթ.) պարբերականների խմբագիր, Սովետական Հայաստանի գրողների ասոցիացիայի նախագահ, Հայաստանի պրոլետարական գրողների

ասոցիացիայի ներկայացուցիչը Մոսկվայում (1925 թ.), գրական «Երեքի խմբակ»-ի (Եղիշե Չարենց, Գևորգ Աբով, Ազատ Վշտունի) անդամ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - *125-ամյակ*

**ՍԱՐԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ (1959), քանդակագործ - 60-ամյակ**

**18.07**

**ԶԱՐՈՒՐԻ (ԵՎՏԵՐՊԵ) ԳԱԼԵՄՔՅԱՐՅԱՆ (1874-1971),** բանաստեղծուհի, արձակագիր, մշակութային, հասարակական գործիչ - *145-ամյակ*

**ՎԱՐԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ (1894-1938),** գրող, արձակագիր, հրապարակախոս, մանկավարժ, «Շեշտ» պարբերականի խմբագիր (1923 թ.), ԵՊՀ գիտական քարտուղար (1924-1928 թթ.), Ստալինյան ռեպրեսիայի զոհ - *125-ամյակ*

**19.07**

**ԱՎԵՏԻՍ ԲԱՐՍԵՂՅԱՆ (1949),** բեմանկարիչ, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գլխավոր նկարիչ (1999 թ.), ՌԴ «Պրեմիերա» միավորման գլխավոր նկարիչ (1995-1997 թթ.), ՀՀ վաստակավոր նկարիչ (2011 թ.) - *70-ամյակ*

**ԷՂԳԱՐ ԴԵԳԱ (1834-1917),** ֆրանսիացի գեղանկարիչ, գրաֆիկ, քանդակագործ - *185-ամյակ*

**ՀԱՂԹԱՆԱԿ ՇԱՐՈՒՄՅԱՆ (ՀԱՂԹՈ) (1944),** գեղանկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ, Երևանի գլխավոր նկարիչ (1977-1989 թթ.), ՀՀ վաստակավոր նկարիչ (2010 թ.) - *75-ամյակ*

**ՎԱՐԴԻԹԵՐ ՖԵԼԵԿՅԱՆ (1869-1952),** դերասանուհի, «Ֆելեկյան» թատերախմբերի կազմակերպիչ (Եգիպտոս 1904 թ., Կ.Պոլիս, 1919-1922 թթ.) - *140-ամյակ*

**20.07**

**ԱՐԳԱՍ ԱՅՎԱԶՅԱՆ (1947),** պատմաբան, մատենագետ, հայա-

գետ, նախիջևանագետ, լրագրող, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2009 թ.) - *70-ամյակ*

**ԳՈՒՐԳԵՆ ՕՎԱՆԵՍՈՎ (1909-1993)**, երկրաբան, ՌԽՖՍՀ նավթի ու գազի արդյունաբերության գլխավոր վարչության պետ (1965-1981 թթ.), ՌԽՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1956 թ.) - *110-ամյակ*

**ԽԱՉԻԿ ՂԱՐԱԲԵԿՅԱՆ (1939-2008)**, բեմանկարիչ, գեղանկարիչ, մանկավարժ, Կիրովականի Հ. Աբելյանի անվան պետական թատրոնի գլխավոր նկարիչ (1971-ից) - *80-ամյակ*

**ՀԱԿՈՔ ՄԱՐԿՈՍՅԱՆ (1904-1972)**, ֆիզիոլոգ, մանկավարժ, ԽՍՀՄ Բուժիրատի խմբագիր, տնօրեն (1942-1948 թթ.), ՌԽՖՍՀ, ԽՍՀՄ ՄԳԱ ֆիզիկական դաստիարակության, դպրոցական հիգիենայի ինստիտուտի տնօրեն (1949-1968 թթ.), Տարիքային ֆիզիոլոգիայի, ֆիզիկական դաստիարակության ինստիտուտի տնօրեն (1968-1972 թթ.), ԽՍՀՄ ՄԳԱ ակադեմիկոս (1966 թ.) - *115-ամյակ*

**ՀԱԿՈՔ ՈՍԿԱՆՅԱՆ (ՅԱԿՈՎ ՏԵՐ-ՈՍԿԱՆՅԱՆ) (1924-1993)**, դիրիժոր, մանկավարժ, Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի դիրիժոր (1958-ից), ՀՀ ժողովրդական արտիստ (1977թ.) - *95-ամյակ*

**ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ (1914-1943)**, Խորհրդային Միության հերոս - *105-ամյակ*

**ՍԱՄՎԵԼ ՂԱԶԱՐՅԱՆ (1949)**, քանդակագործ, նկարիչ-ձևավորող - *70-ամյակ*

**ՎՈԼՈՂՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ (1939)**, ճարտարագետ, ԵՊԻ ֆիզիկայի ամբիոնի վարիչ (1984-1994 թթ.), Ս. Պետերբուրգի ռազմական ակադեմիայի բնագիտական գիտակարգերի ամբիոնի վարիչ (1994-ից), ՌԴ բարձրագույն մասնագիտական կրթության վաստակավոր գործիչ (2004 թ.) - *80-ամյակ*



## **21.07**

**ԷՈՆԵՍ ՅԵՄԻՆՉՈՒԵՅ (1899-1961)**, ամերիկացի գրող, լրագրող, սցենարիստ, վիպասան, դրամատուրգ, Նոբելյան մրցանակակիր գրականության ասպարեզուն (1954 թ.) - *120-ամյակ*

## **22.07**

**ԳԱԲՐԻԵԼԼԱ ՈՒԼՈՒԴՈՋՅԱՆ (1934-2016)**, պատմաբան, բանասեր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր (2008 թ.), Հայագիտական հետազոտությունների միջազգային ընկերակցության անդամ - *85-ամյակ*

## **23.07**

**ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՍԱՅԱԴՅԱՆ (1909-1991)**, ճարտարագետ, քիմիկտեխնոլոգ, ՀԽՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1970 թ.) - *110-ամյակ*

**ԷՄՍԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ (1934-2014)**, պատմաբան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Նոր պատմության» բաժնի վարիչ (2003-ից) - *85-ամյակ*

## **24.07**

**ԻԼՅԱ ՌԵՊԻՆ (24.07 (05.08) 1844-1930)**, ռուս գեղանկարիչ, Գեղարվեստական շրջիկ ցուցահանդեսների ընկերության անդամ (1878-ից), Գեղարվեստի Կայսերական ակադեմիայի ակադեմիկոս, Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր (1898-1899 թթ.) - *175-ամյակ*

**ՍՈՒՐԵՆ ԱՎՉՅԱՆ (24.07 (05.08) 1904-1985)**, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, դրամատուրգ, գրական-մշակութային գործիչ, Վրացական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1936-ից), Վրաստանի Գրողների միության հայկական մասնաճյուղի փոխնախագահ (1941-1946 թթ.) - *115-ամյակ*

## **25.07**

**ՎԱՍԻԼԻ ՇՈՒԿՇԻՆ (1929-1974)**, ռուս գրող, կինոռեժիսոր, դերասան, սցենարիստ, դրամատուրգ - *90-ամյակ*

**ՕՔՐՈ ՕՔՐՈՅԱՆ (1939-2003)**, գրող, բանաստեղծ, գրականագետ, Հայաստանի գրողների միության անդամ - *80-ամյակ*

**26.07**

**ՖԵՆՐՈՐ ՇԵԽՏԵԼ (26.07 (07.08) 1859-1926)**, ռուս ճարտարապետ, Ս. Պետերբուրգի Գեղարվեստի ակադեմիայի ճարտարապետության ակադեմիկոս (1902-ից), Մոսկվայի ճարտարապետների ընկերության նախագահ (1906-1922 թթ.) - *160-ամյակ*

**27.07**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՅՈՒՄԱ (ՈՐԴԻ) (1824-1895)**, ֆրանսիացի գրող, դրամատուրգ, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1874-ից), «Կամեռլիազարդ տիկինը» վեպի հեղինակ - *195-ամյակ*

**ԵՄԵԼԻԱՆ ԲՈՒԿՈՎ (27.07 (08.08) 1909-1984)**, մոլդովացի արձակագիր, բանաստեղծ, Մոլդավիայի ԽՍՀ ժողովրդական գրող (1982 թ.) - *110-ամյակ*

**ՎԱՂԱՐՇԱԿ ՋՐԲԱՇՅԱՆ (1929-2000)**, ֆիզիկոս, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996 թ.) - *90-ամյակ*

**ՕՏՈ ԵՎԱԲՈՎԻՉ ՍԿՈՒԼՍԵ (27.07 (08.08) 1889-1967)**, լատիշ նկարիչ, բեմանկարիչ, Լատվիայի ԽՍՀ ժողովրդական նկարիչ (1959 թ.), Լատվիայի ԽՍՀ նկարիչների միության վարչության նախագահ (1952-1953 թթ.) - *130-ամյակ*

**28.07**

**ԱՐՄԵՆ ՇԱՊԱՆՅԱՆ (ՇԱԲԱՆՅԱՆ) (1864-1949)**, ծովանկարիչ, Ֆրանսիայի ծովանկարիչների, գունավոր փորագրության նկարիչների ընկերությունների, հայ արվեստագետների «Անի» խմբակցության անդամ - *155-ամյակ*

**ՎԱՐԱՊԵՏ ՊԵՅ ՏՅՈՒՋ (1779-1855)**, հասարակական գործիչ, բարերար, Վալիտե սուլթանի սեղանավորը - *240-ամյակ*

**29.07**

**ԱՎԵՏ (ԱԼՖՐԵՂ) ՏԵՐՏԵՐՅԱՆ (1929-1994)**, կոմպոզիտոր, ման-

կավարժ, ՀԽՍՀ (1984 թ.), ԽՍՀՄ (1991թ.) ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ կոմպոզիտորների միության անդամ, նոր սիմֆոնիկ ոճի հիմնադիր - *90-ամյակ*

**ՔՈՐԻՍ ՄԿՐՏՉՅԱՆ (1929-1999)**, լրագրող, խմբագիր, ՀԽՍՀ վաստակավոր լրագրող - *90-ամյակ*

**ԳԵՎՈՐԳ (ՋՈՐՋ) ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ (1929)**, նավթագետ, մանկավարժ, խմբագիր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (1998 թ.), Իտալիայի “Studiorum Minerva” ակադեմիայի, Բեդֆորդի (Արիզոնա) և այլ համալսարանների պատվավոր դոկտոր, ԱՄՆ ռազմածովային ուժերի գեներալ, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ - *90-ամյակ*

### 30.07

**ՂԵՎՈՆԴ ՏԱՅԱՆ (1884-1968)**, երաժշտագետ, մանկավարժ, Մխիթարյան միաբանության անդամ, «Բազմավեպ»-ի խմբագիր (1921-1927 թթ.) - *135-ամյակ*

**ՍՈՒՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆ (1929-1999)**, քանդակագործ, մանկավարժ, Հայաստանի նկարիչների միության պատասխանատու քարտուղար, գեղարվեստական խորհրդի ղեկավար, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1980 թ.) - *90-ամյակ*

**ՎԱՐՈՒԺԱՆ ԵՓՐԵՄՅԱՆ (1959)**, գեղանկարիչ, Հայաստանի նկարիչների միության (1995-ից), Ռուսաստանի նկարիչների ստեղծագործական միության, նկարիչների «Միր» ստեղծագործական միության անդամ - *60-ամյակ*

**ՖՐԱՆՍ ՄԱԶԵՐԵԼ (ՄԱՍԵՐԵԼ) (1889-1972)**, բելգիացի նկարիչ - *130-ամյակ*

### 31.07

**ԻԳՈՐ ԾԱՏՈՒՐՅԱՆ (1939-1998)**, ճարտարագետ, շինարար, ՀԽՍՀ վաստակավոր ճարտարագետ(1963 թ.) - *80-ամյակ*

**ՍԵՐՊԵՅ ՂԱՆԻԵԼՅԱՆ (1929- 2009)**, օպերային երգիչ (տենոր), մանկավարժ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1967 թ.) - *90-ամյակ*

## ՕԳՈՍՏՈՍ

### 1.08

**ԳՐԻԳՈԼ ԱՐԱՇԻՉԵ (1914-1994)**, վրացի բանաստեղծ, վրաստանի սովետական գրողների միության վարչության առաջին քարտուղար (1967-ից) - *105-ամյակ*

**ՄԻԽԱՅԻԼ ԱՆԴՐԻԱՍՈՎ (ՄԻՔԱՅԵԼ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ) (1914-1984)**, գրող, հրապարակախոս - *105-ամյակ*

**ՆԵՐՍԵՍ ՈՒՆԱՆՅԱՆ (1924-1957)**, սփյուռքահայ քանդակագործ, գրաֆիկ - *95-ամյակ*

**ՈՒՖԱՅԵԼ ՄԵԼԻՔ-ՕՐԱՆՋԱՆՅԱՆ (1939-2014)**, կենսաօրգանիկ, քիմիկոս, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի (1997 թ.), Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի (1997 թ.), հայկական մասնաճյուղերի, Գիտական հայտնագործությունների հեղինակների միջազգային ակադեմիայի (1998 թ.) նախագահ, Իսպանիայի ազգային թագավորական ակադեմիայի ակադեմիկոս - *80-ամյակ*

### 2.08

**ԳՈՒՐԳԵՆ ԳԱԼՍՅԱՆ (1944)**, արձակագիր, լրագրող, ծաղրանկարիչ, թարգմանիչ, ՀՀ Գրողների միության անդամ (1985-ից), «Գարուն» ամսագրի գեղարվեստական խմբագիր (1970-1971 թթ.) - *75-ամյակ*

**ՈՌԲԵՐՏ (ՈՌՊԵՐՏ) ՃԵՊԵՃՅԱՆ (1909-2000)**, ակնաբույժ, հասարակական գործիչ, «Ճեպեճյան» ակնաբուժարանի հիմնադիր (1948 թ.), «Աչքազրկության կանխարգելման սիրիական ընկերության» հիմնադիր, Հալեպում կուլյորերի առաջին դպրոցի կազմակերպիչ (1955 թ.), ՀԲԸՄ Սիրիայի մասնաճյուղի ղեկավար (1968-1970 թթ.), ՀԲԸՄ «Մատենագիտական հանձնախմբի» հիմ-

նադիր (1968 թ.) - *110-ամյակ*

#### **4.08**

**ԷՂՄՈՆՏ ՅԱՂՃՅԱՆ (1904-1997)**, գեղանկարիչ, Հարավային Կարլինայի համալսարանի գեղարվեստական բաժնի տնօրեն (1945 թ.) - *115-ամյակ*

**ՎԻՈԼԵՏԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ (1944)**, կինոյի և թատրոնի դերասանուհի, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1987 թ.) - *75-ամյակ*

#### **5.08**

**ՆՈՐԱՅՐ ՂԱԲԱՂՅԱՆ (1904-1951)**, գրականագետ, մանկավարժ, խմբագիր, ԵՊՀ ռեկտոր (1937 թ.), ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934 թ.) - *115-ամյակ*

**ՆՈՒՆԵ ԵՍԱՅԱՆ (1969)**, երգչուհի, ՀՀ վաստակավոր արտիստ (2006 թ.) - *50-ամյակ*

#### **6.08**

**ԶԻԿ (ԽԱԶԻԿ) ՏԱՍՏՅԱՆ (1919-1985)**, ռումինահայ նկարիչ, գրաֆիկ, ծաղրանկարիչ - *100-ամյակ*

#### **7.08**

**ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿՅԱՆ (1894-1988)**, գրող, «Նոր գիր» գրական հանդեսի հիմնադիրներից, խմբագիր (1939-1954 թթ.) - *125-ամյակ*

#### **8.08**

**ԲՅՈՒԶԱՆԴ ՔԵԶՅԱՆ (1859-1921)**, խմբագիր, թարգմանիչ, մշակութային գործիչ, «Բիւզանդիոն» պարբերականի հրատարակիչ-խմբագիր (1896-1916 թթ.) - *160-ամյակ*

#### **9.08**

**ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆ (1934)**, դրամատուրգ, արձակագիր, ՍՄՀՄ Գրողների միության անդամ (1974 թ.), Երևանի ռադիոկոմիտեում գրական-դրամատիկական հաղորդումների խմբագիր (1963-1967թթ), Հայկական թատերական ընկերության պատաս-

խանատու քարտուղար (1984-1985 թթ.) - **85-ամյակ**

**ՋՈՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ (1929)**, ջութակահար, մանկավարժ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1963 թ.) - **90-ամյակ**

**ՍԱՐԻԱ ԳՈՒԼԵԳԻՆԱ (ՄԵՅԹԱՐՉՅԱՆ) (1959)**, օպերային երգչուհի (սոպրանո), «Յունիսեֆ»-ի բարի կամքի դեսպան, Բելառուսի վաստակավոր արտիստ (1987 թ.), Հյուսիսային Օսեթիայի ժողովրդական արտիստ (2013 թ.) - **60-ամյակ**

## 10.08

**ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆ (1924)**, դերասան, ռեժիսոր, սցենարիստ, Հոլմի. Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի գլխավոր ռեժիսոր (1957-1959 թթ.), «Ազուլիս» տիկնիկային թատրոն-ստուդիայի գեղարվեստական ղեկավար (1988-ից), Կիևի հայկական տիկնիկային թատրոնի հիմնադիր, գեղարվեստական ղեկավար (2007-ից), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2003 թ.), ՀՀ ժողովրդական արտիստ (2018 թ.) - **95-ամյակ**

**ԼԵՎՈՆ ՄԱՂՈՅԱՆ (1909-1964)**, դուդուկահար, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1961 թ.) - **110-ամյակ**

**ԿԼԱՐԱ ԹԵՐՉՅԱՆ (1929)**, լրագրող, արձակագիր, Հայաստանի ռադիոյի գրական-գեղարվեստական հաղորդումների խմբագիր (1953-2003 թթ.), «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագիր, Հայաստանի գրողների (1995 թ.), ժուռնալիստների միությունների անդամ - **90-ամյակ**

**ՍԱՐԻ-ՌՈՋ ԱՐՈՒՍԵՖՅԱՆ (1944)**, կինոյի և թատրոնի դերասանուհի, բեմադրիչ, հրապարակագիր, գրաքննադատ, հեռուստաթատրոնում պոեզիայի ժանրի հիմնադիր, ԱՄՆ-ում «Արշալույս» (1968 թ.) և «Մարի Ռոզ Աբուսեֆյան» թատրոնների հիմնադիր-ղեկավար - **75-ամյակ**

**ՄԿՐՏԻՉ ԽԵՐԱՆՅԱՆ (1899-1970)**, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1939-ից) - **120-ամյակ**

## 12.08

*Երիտասարդների միջազգային օր*

## 13.08

**ԲԱԳՐԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1929-1990)**, կինոռեժիսոր, սցենարիստ, դերասան, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (1988 թ.) - *90-ամյակ*

**ՂԱԻՏՐԻ ՆԱԼԻՎԿԻՆ (13.08 (25.08) 1889-1982)**, ռուս երկրաբան, հնէաբան, ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս (1946 թ.) - *130-ամյակ*

## 14.08

**ԳԵՎՈՐԳ ԽԱՆԱՂՅԱՆ (1924-2003)**, գեղանկարիչ, գրաֆիկ, Հայաստանի նկարիչների միության անդամ (1959-ից), ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1985 թ.) - *95-ամյակ*

**ԳՈՒՐԳԵՆ ՍՈՒՇԵՂՅԱՆ (1934)**, ճարտարապետ, մանկավարժ, Հայաստանի վաստակավոր ճարտարապետ (1981 թ.), ՌԴ ճարտարապետության և շինարարության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան անդամ (1999 թ.), Գյումրու գլխավոր ճարտարապետ (1962-1964 թթ.), Երևանի գլխավոր ճարտարապետ (1982-1990 թթ.), «Երևաննախագիծ ՓԲԸ» գործադիր տնօրեն (2001-2009 թթ.), Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1963-ից) - *85-ամյակ*

**ՊԵՐՃԱՆՈՒՇ ՄՍՐՅԱՆ-ՕՔՍՈՒՋՅԱՆ (1914-2009)**, ճարտարապետ, ճարտարագետ-շինարար, մանկավարժ, Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1943-ից), Հայաստանի վաստակավոր շինարար (1967 թ.) - *105-ամյակ*

## 15.08

**ԳԵՈՐԳԻ ԳՎՐԱՆՅԱՆ (1934-2010)**, սաքսաֆոնահար, կոմպոզիտոր, խմբավար, Մոսկվայի Օ. Լունդստրեմի անվան պետական ջազ նվագախմբի հիմնադիր (2003-2006 թթ.), Ռուսաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամ (1996-ից), ԽՍՀՄ վաստակավոր (1981 թ), Ռուսաստանի ժողովրդական արտիստ (1993 թ.) - *85-ամյակ*

**ՆԱՊՈՒԵՆՆ ԲՈՆԱՊԱՐՏ (1769-1821)**, ֆրանսիացի զորավար, պետական, ռազմական գործիչ, Ֆրանսիական Հանրապետության առաջին կոմսուլ, Ֆրանսիայի կայսր - **250-ամյակ**

**ՍԻԼՎԻ ՎԱՐՂԱՆ (1944)**, ֆրանսահայ երգչուհի, դերասանուհի - **75-ամյակ**

**ՎԵՆԵՐԱ ՀԱԿՈՐՅԱՆ (1904-1988)**, դերասանուհի, Վրաստանի ժողովրդական արտիստ (1964 թ.) - **115-ամյակ**

## **17.08**

**ՍԱՐԻԱՍ ՀԱԿՈՐՅԱՆ (1949)**, քանդակագործ, նկարչուհի, Հայաստանի նկարիչների միության անդամ (1979 թ.), «Արվեստի միջազգային ասոցիացիայի» անդամ (1996 թ.), «Նորեոն» ստեղծագործական կենտրոնի հիմնադիր-նախագահ (2001 թ.), «Քանդակի միջազգային կազմակերպության» անդամ (2001 թ.) - **70-ամյակ**

**ՍՏԵՓԱՆ ԹԱՐՅԱՆ (ԹԱՐԻԱՆՅԱՆ) (17.08 (29.08) 1899-1954)**, բեմանկարիչ, քանդակագործ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945 թ.) - **120-ամյակ**

**ՏԻԳՐԱՆ ՀԵՔԵՔՅԱՆ (1959)**, խմբավար, մանկավարժ, «Սայաթ-Նովայի» անվան երաժշտական դպրոցի տնօրեն, «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի գեղարվեստական ղեկավար, գլխավոր դիրիժոր, «Հայ փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիայի հիմնադիր-նախագահ, ՀՀ վաստակավոր մանկավարժ (2010 թ.) - **60-ամյակ**

## **18.08**

**ԶԱՔԱՐԻԱ ՎԱՊՐՈՒՇՅԱՆ (1794-1870)**, հունգարահայ գրող, բանարանագիր, մանկավարժ, հասարակական գործիչ- **225-ամյակ**

**ԼՅՈՒԲՈՎ ՎՈՅՆՈՎԱ-ՇԻԿԱՆՅԱՆ (1909-1990)**, բալետի արտիստուհի, պարուսույց, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1984 թ.) - **110-ամյակ**



## 20.08

**ԱՐՇԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ (1929-1999)**, գրականագետ, բանասեր, մանկավարժ - *90-ամյակ*

**ՎԱՐԵ (ՎՈԼՈՂԻԱ) ՊՈՂՈՍՅԱՆ (1944-2010)**, գրող, Հայաստանի գրողների միության անդամ (1975-ից), «Հայաստան» հրատարակչության ավագ խմբագիր (1974-1976 թթ.), «Գարուն» ամսագրի գրականության բաժնի վարիչ (1976-1980 թթ.) - *75-ամյակ*

## 21.08

**ԱԼԵՔ ԽԱՉՈՒՆՑ (ԱԼԵՔՍԱՆՂՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ) (1934-1977)**, բանաստեղծ, թարգմանիչ, մանկավարժ, «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի գրականության և արվեստի բաժնի վարիչ (1965-1973 թթ.), ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1966-ից) - *85-ամյակ*

## 22.08

**ԱԼԲԵՐՏ ՆԱԼՉԱԶՅԱՆ (1939)**, հոգեբան, փիլիսոփա, Վարքային հոգեբուժության միջազգային ակադեմիայի անդամ, Հոգեբանների միջազգային խորհրդի, կիրառական հոգեբանության միջազգային ասոցիացիայի, հոգեբանական գիտական ընկերությունների անդամ - *80-ամյակ*

**ՀԱԿՈՒԹԵՐՉՅԱՆ (1879-1915)**, բանասեր, դեղագործ, հրապարակախոս, փաստաբան, Մեծ Եղեռնի զոհ - *140-ամյակ*

**ՀՈՎՀԱՆՆԵՍ (ԻՎԱՆ) ԻՍԱԿՈՎ (1894-1967)**, Խորհրդային Միության նավատորմի հայազգի ծովակալ, գինիրամանատար, գիտնական, գրող, Սովետական Միության հերոս (1965 թ.), ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ (1958 թ.), Խորհրդային Միության ԳԱ օվկիանոսագիտության կոմիտեի անդամ (1958-ից), ՀՍՍՀ ԳԱ պատվավոր անդամ (1967 թ.) - *125-ամյակ*

## 23.08

**ԺԱՆՆԱ ՀԱԿՈՒՅԱՆ (1954)**, բանաստեղծուհի, արձակագիր, լրագրող, գրականագետ, մանկավարժ, Բնության և հասարակու-

թյան մասին գիտությունների միջազգային ակադեմիայի անդամ, Հայաստանի գրողների (2007 թ.), ԼՂՀ (1998 թ.) միությունների անդամ, «Պետություն և գործարարություն» թերթի հիմնադիր-խմբագիր (2005-2007 թթ.) - **65-ամյակ**

## **24.08**

**ԱԼԲԵՐՏ ԻՍՈՅԱՆ (1944-2018)**, հրատարակիչ, «Գրական թերթ»-ի խմբագիր (2000-2001 թթ.), «Հայագիտակ» հրատարակչության հիմնադիր-ղեկավար (1991-2018 թթ.) - **75-ամյակ**

**ԱՐՄԵՆ ԲԱՐՈՒԹՉԵՎ (1904-1976)**, ճարտարապետ, մանկավարժ, թատերական նկարիչ, Լենինգրադի «Գիպրոգոր» ինստիտուտի Լենինգրադի մասնաճյուղի գլխավոր ճարտարապետ (1934-1941 թթ.), ՌԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1969 թ.) - **115-ամյակ**

**ԷՂՈՒԱՐԴ ՆԱՊՐԱՎՆԻԿ (1839-1916)**, չեխ դիրիժոր, կոմպոզիտոր, երաժշտական գործիչ - **180-ամյակ**

**ԻՐԻՆԱ ԴՐԱՍԲՅԱՆ (1939)**, արվեստաբան, Հայաստանի նկարիչների միության անդամ (1972-ից), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2014 թ.) - **80-ամյակ**

**ԼՈՒԻՍԵ ԿՈՇԵՑՅԱՆ (1949)**, լրագրող, թարգմանչուհի - **70-ամյակ**

**ՖԵՈՂՈՐ ՇԵՎՉԵՆԿՈ (1914-1995)**, ուկրաինացի պատմաբան, Ուկրաինայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ (1969 թ.) - **105-ամյակ**

## **25.08**

**ՀԱՎՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ (1879-1943 թթ.)**, իշխան, ռուսական և հայկական բանակի ռազմական, պետական գործիչ, գեներալ-մայոր, Հայոց ազգային խորհրդի անդամ (1918-1920 թթ.), Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպանը Մեծ Բրիտանիայում (1920 թ.) - **140-ամյակ**

**ՀԱԿՈՐ ԶՈՐՅԱՆ (1894-1942)**, պատմաբան, տնտեսագետ, մանկավարժ, ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի թղթակից-անդամ (1926 թ.), Հանրային գրադարանի (1928-1929 թթ.), Կուլտուրայի պատմության ինստիտուտի (1932-1935 թթ.), Հայաստանի պատմության թանգարանի տնօրեն (1936-1937 թթ.) - **125-ամյակ**

**28.08**

**ԱՆԱՀԻՏ ԱՂԱՍԱՐՅԱՆ (1959)**, դրամատուրգ, գրող, սցենարիստ - **60-ամյակ**

**ՅՈՂԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ՖՈՆ ԳՅՈԹԵ (1749-1832)**, գերմանացի բանաստեղծ, գրող, վիպասան, դրամատուրգ, բնագետ, փիլիսոփա - **270-ամյակ**

**29.08**

**ԱՆՆԱ ԲՈՅԱԶՅԱՆ (1954-2015)**, բուսաբան-սնկաբան, մանկավարժ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ (2014 թ.), Վիեննայի միջազգային համալսարանի պատվավոր պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն (2006-2015 թթ.), Տեսական օրգանական քիմիկոսների համաշխարհային ընկերության անդամ (1990-ից) - **65-ամյակ**

**ԽԱՉԱՏՈՒՐ ԵՍԱՅԱՆ (29.08 (11.09) 1909-1977)**, գեղանկարիչ, մանկավարժ, Երևանում պետական ադրբեջանական թատրոնի գլխավոր նկարիչ (1940-1918 թթ.), Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի գլխավոր նկարիչ (1968-1970 թթ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1965 թ.) - **110-ամյակ**

**ՀՄԱՅԱԿ ՊՈՂՈՍՅԱՆ (1909-1992)**, ճարտարապետ, Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1942-ից), ՀԽՍՀ վաստակավոր շինարար (1967 թ.) - **110-ամյակ**

**30.08**

**ԳԵՂՈՒՆԻ ԶԹՅԱՆ (1929)**, կոմպոզիտոր, մանկավարժ, Կոմպոզիտորների միության անդամ (1955-ից), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1980 թ.), ՀՀ ժողովրդական արտիստ (2011

թ.) - *90-ամյակ*

**31.08**

**ԱԼԵՔՍԱՆՈՐ ՈՒՂԻՇՉԵՎ (1749-1802)**, ռուս գրող, բանաստեղծ. վիպասան, հեղափոխական, փիլիսոփա - *270-ամյակ*

**ԳՈՒՐԳԵՆ ՋԱՅԿՈՒՆԻ (1889-1966)**, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, քաղաքական գործիչ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934 թ.) - *130-ամյակ*

**ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ (1659-1711)**, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, գրող - *360-ամյակ*

**ՈՌԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆ (1954)**, պետական, քաղաքական գործիչ, Արցախի Հանրապետության առաջին նախագահ (1994-1997 թթ.), ՀՀ վարչապետ (1997-1998 թթ.), ՀՀ երկրորդ նախագահ (1998-2008 թթ.), Արցախի հերոս - *65-ամյակ*

**ՏԻԳՐԱՆ ՃԱՌԱՔՅԱՆ (1909-1996)**, ֆիզիոլոգ, ռադիոլոգ, մանկավարժ, Բժշկական ծառայության գեներալ-մայոր (1961 թ.), ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության գլխավոր ճառագայթաբան - *110-ամյակ*

## ԱԵՊՏԵՄԲԵՐ

**1.09**

*Գիտելիքի, գրի և դպրության օր*

**ԱՐՐԱՋԱՍ ՃԱՐՅԱՆ (1819-1892)**, թարգմանիչ, մանկավարժ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ (1840-ից), Կ. Պոլսի Բերայի, Քաղկեդոնի, Վենետիկի Մուրատ-Ռափայելյան վարժարանի տեսուչ - *200-ամյակ*

**ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՆԹԱՐ (01.09 (13.09) 1859-1937)**, գյուղատնտես, ՀԽՍՀ Աշխատանքի հերոս (1934 թ.), ՌԽՖՍՀ գիտությունների և

տեխնիկայի վաստակավոր գործիչ, Վոլոգդայում կաթնատնտեսության գծով Ռուսաստանում առաջին բարձրագույն գյուղատնտեսական ուսումնական հաստատության կազմակերպիչ (1911 թ.) - *160-ամյակ*

**ՔԱԳՐԱՏ ԱՐԱԶՅԱՆ (01.09 (13.09) 1879-1957)**, ճարտարապետ, ՀԽՍՀ ճարտարապետների միության անդամ (1935 թ.), «Հայ-բնակչի նկոպ» միավորման գլխավոր ճարտարագետ (1928-1936 թթ.) - *140-ամյակ*

**ԿԱՐԱՊԵՏ ՔԱՅԱԽՅԱՆ (1919-1996)**, մատենագետ, գրադարանավար, մանկավարժ - *100-ամյակ*

**ՀԱՍՄԻԿ ՆԱՂԱՇՅԱՆ (1919-2003)**, դերասանուհի, տիկնիկավար, Հայաստանի թատերական գործիչների միության անդամ, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1956 թ.) - *100-ամյակ*

**ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ (ՂԱԶԱՆԶՅԱՆ) (1909-1994)**, գրականագետ, թատերագետ, մանկավարժ, «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր (1941-1943 թթ.), ՀԽՍՀ ԳԱ արվեստի տնօրեն (1958-ից), շեքսպիրագիտության կենտրոնի հիմնադիր-ղեկավար (1966-1994 թթ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961 թ.), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1986 թ.) - *110-ամյակ*

**ՍԵՐԳԵՅ ԱՂԱԶԱՆՅԱՆ (1929-2005)**, կոմպոզիտոր, ջութակահար, Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ (1975-ից), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1981 թ.) - *90-ամյակ*

**ՎԱՀԱՆ (ԹՈՎԱՍԱ) ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1894-1977)**, գրող, մանկավարժ, հոգևոր գործիչ, Մուրատ-Ռաֆայելյան վարժարանի տնօրեն (1930-1931 թթ.), տեսուչ (1957-1960 թթ.), «Բազմավեպ» ամսագրի խմբագիր (1929-1930 թթ.), Վենետիկում «Մխիթարյան ընտանիք» ամսագրի հիմնադիր (1947 թ.), Հալեպի Մխիթարյան վարժարանի տնօրեն (1948-1956 թթ.), Վենետիկի ակադեմիայի իսկական անդամ (1965 թ.) - *125-ամյակ*

## 2.09

**ՍՈՍ (ԵՓՐԵՄ) ՄԵԼԻՔ (ՄԵԼԻՔ-ՇԱՐՆԱԶԱՐՅԱՆ) (1914-2003)**, գեղանկարիչ - *105-ամյակ*

**ՎԱՐՍԵՆԻԿ ԵՍԱՅԱՆ (1909-1985)**, գրականագետ, թարգմանչուհի, մանկավարժ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1969-ից), ՅՄԱՅՅ վաստակավոր ուսուցչուհի - *110-ամյակ*

## 3.09

**ՄԱՍԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1929)**, գեղանկարիչ, մանկավարժ, Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի դեկան (1986-1991 թթ.), Հայաստանի նկարիչների միության անդամ (1962-ից), ՅՄԱՅՅ ժողովրդական նկարիչ (1990 թ.) - *90-ամյակ*

## 5.09

**ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ (1899-1980)**, թատերագետ, գրականագետ, Հայաստանի թատերական թանգարանի տնօրեն (1935-1949 թթ.), Երևանի թատերական տեխնիկումի տնօրեն (1935-1937 թթ.), Երևանի թատերական ինստիտուտի թատերագիտական ֆակուլտետի դեկան (1944-1947 թթ.), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տնօրեն (1963-1980 թթ.) ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934-ից), ՅՄԱՅՅ արվեստի վաստակավոր գործիչ (1956 թ.) - *120-ամյակ*

**ՍՈՒՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1939)**, պետական, քաղաքական, կուսակցական գործիչ, դիվանագետ, ՀՀԿ Կենտկոմի առաջին քարտուղար (1988-1990 թթ.), ՀՀ դեսպան Բելառուսում (1999-2003 թթ.) - *110-ամյակ*

**ՍՈՒՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ (05.09 (18.09) 1904-1979)**, ասմունքող, դերասան, ՅՄԱՅՅ (1945 թ.), ՌԽՖՍՅ (1967 թ.) ժողովրդական արտիստ - *80-ամյակ*

## 7.09

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ (1939)**, գրող, գրաքննադատ, թարգմանիչ, դրամատուրգ, արձակագիր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2012 թ.) - *80-ամյակ*

**ԱՌՆՈՒԴ ԱՂԱԲԱԲՈՎ (1929-1999)**, սցենարիստ, կինոռեժիսոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1980 թ.) - *90-ամյակ*

**ԹԵՈՂՈՐ ԹՈՐՈՍԵՎԻՉ (ԹԱԴԵՎՈՍ ԹՈՐՈՍՅԱՆ) (07.09 (17.09) 1789-1876)**, բժիշկ, դեղագործ, քիմիկոս, գյուտարար, հասարակական գործիչ, բարերար - *230-ամյակ*

**ՍԱՀԱԿ ՍԱՀԱԿՅԱՆ (1924-2010)**, քանդակագործ, գեղանկարիչ, փայտի փորագրիչ, ժողովրդական վարպետ - *90-ամյակ*

## **8.09**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԵՔՍԱՆԴՐՅԱՆ (1889-1970)**, կոմպոզիտոր, թառահար, մանկավարժ, Հայաստանի երգի-պարի անսամբլի գործիչքային մասի ղեկավար (1938 թ.), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1965 թ.) - *120-ամյակ*

**ԱՂԱՍԻ ԵՍԱՅԱՆ (1914-1983)**, իրավաբան, միջազգային իրավունքի մասնագետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ղեկավար (1957-1965 թթ.), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1965 թ.) - *105-ամյակ*

## **10.09**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԴՈՎԺԵՆԿՈ (1894-1956)**, ուկրաինացի կինոռեժիսոր, գրող, կինոդրամատուրգ, ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստ, համր կինոյի նշանավոր գործիչ - *125-ամյակ*

**ԱՆԱՐԻՏ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ (1949-2017)**, գրող, բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, լրագրող, Թբիլիսիի «Հայարտան» խորհրդի անդամ, ՎԳՄ «Կամուրջ» տարեգրքի գլխավոր խմբագիր (1988-ից), Վրաստանի, Հայաստանի գրողների միությունների անդամ (2012 թ.), Կալիֆորնիայի հայ գրողների միության պատվավոր անդամ (2016 թ.), Վրաստանի գրողների միության «Մերանի» հրատարակչության հայկական վերաբացված մասնաճյուղի ավագ խմբագիր, նախագահ (2016 թ.) - *70-ամյակ*

**ԻՆՆԱ (ԻՆԵՍԱ) ԹՈՒՄԱՆՅԱՆ (1929-2005)**, կինոռեժիսոր, լրագրող, հրապարակախոս, ԽՍՀՄ կինեմատոգրաֆիստների միու-

թյան անդամ, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ (2000 թ. ) - **90-ամյակ**

**ԼԻԱ ՔԱՄԱԼՅԱՆ (1929-2005)**, վիրուսաբան, իմունաբան, Հայաստանի մանրէաբանների բաժանմունքի նախագահ, «Ինտերֆերոն» (1980 թ.), Իմունաբանության և ալերգաբանության միջազգային (1999 թ.) ընկերակցությունների, ՀՀ Հակառուռուցքային միության (1997 թ.) անդամ - **90-ամյակ**

**ՍԱՀԱԿ ԼԻՍԻՑՅԱՆ (1864-1934)**, ճարտարագետ, մանկավարժ, Թիֆլիսի ջրնուղի և սանիտարատեխնիկական բաժնի վարիչ (1887-1918 թթ.), Երևանի ջրնուղի վարիչ (1919 թ.), Երևանի, Անդրկովկասի մի շարք քաղաքների ջրնուղի նախագծող, կառուցող - **155-ամյակ**

## 11.09

**ՊԱՎԵԼ ԳՐԱԲՈՎՍԿԻ (1864-1902)**, ուկրաինացի բանաստեղծ - **155-ամյակ**

**ՌՈՐԵՐՏ ՍԱՆՈՒԿՅԱՆ (1929)**, գեղանկարիչ, գրաֆիկ - **90-ամյակ**

## 12.09

**ՍԱՄՎԵԼ ՍԵՎԱԴԱ (ԳՐԻԳՈՐՅԱՆ) (1949)**, գեղանկարիչ, լուսանկարիչ, բանաստեղծ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2014 թ.) - **70-ամյակ**

**ՎԼԱԴԻՄԻՐ ՍՊԻՎԱԿՈՎ (1944)**, ջութակահար, դիրիժոր, «Մոսկվայի վիրտուոզներ» նվագախմբի գեղարվեստական ղեկավար, Ռուսաստանի պետական նվագախմբի ղեկավար (1979 թ.), Համաեվրոպական Մյունխենի ակադեմիայի մրցանակակիր (1981 թ.), ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1990 թ) - **75-ամյակ**

## 13.09

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍԱԴՊՅԱՆ (1954)**, գեղանկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ (1990-ից), ՅՈՒՆԵՍԿՕ-ի արվեստի միջազգային ասոցիացիայի անդամ (1995-ից) - **65-ամյակ**



**ԱՐՄԵՆ ԶԱՐՅԱՆ (ԵՂԻԱԶԱՐՅԱՆ) (1914-1994)**, ճարտարապետ, ՋՅ վաստակավոր ճարտարապետ (1976 թ.) - *105-ամյակ*

#### **14.09**

**ԱԲԻԳ ԱՎԱԳՅԱՆ (1919-1983)**, գրող, արձակագիր, Հայաստանի գրողների միության անդամ (1949-ից), Հայաստանի գրողների միության խորհրդական (1959-1983 թթ.) - *100-ամյակ*

**ԱՆԴՐԱՆԻԿ ԿԻԼԻԿՅԱՆ (1939-2005)**, գրաֆիկ, գեղանկարիչ, մանկավարժ, Հայաստանի նկարիչների միության գրաֆիկայի բաժանմունքի ղեկավար (1998-ից), «Ծիծեռնակ» ամսագրի գեղարվեստական խմբագիր (1982-1986 թթ.) - *80-ամյակ*

**ԳՈՒՍԱՆ ՇԱՐԵՆ (ՇԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ) (1909-1990)**, գուսան, Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական անսամբլի հիմնադիրներից, Գյումրիում աշուղական դպրոցի հիմնադիր (1982 թ.) ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1970-ից), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1967 թ.) - *110-ամյակ*

**ՀՐԱՅՐ ՂԱՐԻՔՅԱՆ (1904-1978)**, կինոօպերատոր, Ռուսաստանի արվեստի վաստակավոր գործիչ (1969 թ.) - *115-ամյակ*

**ՍԵՐԳՈ ՊԱՅԱԶԱՏ (1909-1971)**, բանաստեղծ, արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1934-ից) - *110-ամյակ*

#### **15.09**

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԲԵԿԶԱՂՅԱՆ (15.09 (27.09) 1879-1939)**, պետական, քաղաքական, կուսակցական, հասարակական գործիչ, Հայաստանի առաջին կառավարության արտգործող կոմ, ԽՍՀՄ դեսպանը Նորվեգիայում (1930-1934 թթ.) և Հունգարիայում (1934-1937 թթ.) - *140-ամյակ*

**ԱՅԾԵՆԻԿ ՈՒՐԱՐՏՈՒ (ՏԵՐ-ԽԱՉԱՏՐՅԱՆ) (15.09 (27.09) 1899-1974)**, քանդակագործ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1956 թ.), ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ (1960 թ.) - *120-ամյակ*

**ԳԵՈՐԳԻ ՍԱՐԱԶԵՎ (1919-1994)**, հայազգի դաշնակահար, մանկավարժ, կոմպոզիտոր, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1953 թ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1974 թ.)- *100-ամյակ*

**ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ (1919-2003)**, արձակագիր, մանկավարժ, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1958-ից), Հայպետհրատի տնօրեն (1957-1961 թթ.), ՀԽՍՀ մինիստրների խորհրդի հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գլխավոր խմբագիր (1964-1974 թթ.), ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1975 թ.) - *100-ամյակ*

**ԵՂԻՍԱԲԵԹ ԱՆԱՇՅԱՆ (1869-1951)**, դերասանուհի - *150-ամյակ*

**ՀՐԱՆՏ ԱՂՈՆՑ (1914-1987)**, էներգետիկ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1982 թ.), էներգետիկայի ինստիտուտի տնօրեն (1961-1963 թթ.), էներգետիկայի հայկական գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն (1963-1978 թթ.), ՀԽՍՀ ԳԱ նախագահության ֆիզտեխնիկական և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար (1982-1984 թթ.) ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1970 թ.) - *105-ամյակ*

**ՀՐԱՆՏ ԴԻՆՔ (1954-2007)**, պոլսահայ լրագրող, Ստամբուլի «Ալօս» թերթի հիմնադիր-խմբագիր (1996 թ.) հրատարակիչ - *65-ամյակ*

**ԶԵՅՍՍ ԿՈՒՊԵՐ (1789-1851)**, ամերիկացի գրող - *230-ամյակ*

**ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ (ԱՌԱՔԵԼՅԱՆ) (1889-1967)**, գրող, թարգմանիչ, խմբագիր, մանկավարժ, ՀԽՍՀ Լուսժողկոմատի հրատարակչության գլխավոր խմբագիր (1922-1925 թթ.), Հայաստանի գրողների միության անդամ, վարչության քարտուղար (1950-1954 թթ.), ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1965 թ.) - *130-ամյակ*

## **16.09**

**ԲԱԲԿԵՆ ԱՐԱՐՔՑՅԱՆ (1944)**, քաղաքական, պետական գործիչ, մանկավարժ, Ղարաբաղյան շարժման Հայաստանյան կոմիտեի (1988 թ.), ՀՀԸ հիմնադիր անդամ (1989-2000 թթ.), Ժողովրդա-

վարության և քաղաքացիական հասարակության զարգացման «Արմատ» կենտրոնի հիմնադիր-ղեկավար (1999-ից), ԱԺ (1995-1998 թթ.) նախագահ - **75-ամյակ**

**ՆԻԿՈԼԱՅ ՕՍՏՐՈՎՍԿԻ (16.09 (29.09) 1904-1936)**, ռուս գրող - **115-ամյակ**

**17.09**

**ԷՄՍԱ ԲՈՒԴԱՂՅԱՆ (1944)**, արվեստաբան, մշակութաբան, գրականագետ, մանկավարժ, Ե. Չարենցի տուն-թանգարանի երկրորդ տնօրենը (1983-1989 թթ.), ԽՍՀՄ նկարիչների (1988 թ.), Մոսկվայի Գրողների (2010 թ.) միությունների անդամ, ՌԴ Պետրոս Մեծի անվան գիտությունների և արվեստի ակադեմիայի թղթակից անդամ (2007 թ.) - **70-ամյակ**

**18.09**

**ԱՐՏԵՄ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (1944)**, հայ բանաստեղծ, գրականագետ, թարգմանիչ - **75-ամյակ**

**19.09**

**ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆ (1869-1926)**, գրող, երգիծաբան, հրապարակախոս, խմբագիր - **150-ամյակ**

**ՀԱՅԿ ՅԱՂՃՅԱՆ (ՅԱՂՋՅԱՆ) (1924-1965)**, դիրիժոր, Ֆրեզնոյի ֆիլհարմոնիկ նվագախմբի հիմնադիր, գլխավոր դիրիժոր (1954-ից) - **95-ամյակ**

**20.09**

**ԲՈԳՂԱՆ ՎԵՐԴՅԱՆ (1919-1992)**, գրող, լեզվաբան, մանկավարժ, Խ. Աբովյանի անվան Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պրոռեկտոր (1965-1969 թթ.) - **100-ամյակ**

**ՍՈՖԻ ԼՈՐԵՆ (1934)**, իտալացի կինոդերասանուհի, երգչուհի, «Ոսկե Գլորուս»-ի հնգակի մրցանակակիր, պատվավոր «Օսկար»-ի դափնեկիր (1991 թ.), Կաննի, Վենետիկի, Մոսկվայի, Բեռլինի կինոփառատոների դափնեկիր (1961-1994 թթ.) - **85-ամյակ**

## 21.09

### *ՉՉ անկախության հռչակման օր*

**ԱՐՇԱԿ ԲՐՈՒՏՅԱՆ (21.09 (03.10) 1864-1936)**, երաժիշտ, խմբավար, երգահավաք, մանկավարժ, գեղանկարիչ, քառաձայն երգեցողության սկզբնավորող, տարածող - **155-ամյակ**

**ԿԱՌԼԵՆ ԱՆԱՆՅԱՆ (1924-2011)**, ճարտարապետ, Երևանի գլխավոր ճարտարապետի տեղակալ (1986-1990 թթ.), Հայաստանի ճարտարապետների միության անդամ (1957-ից), ճարտարապետության միջազգային ակադեմիայի Մոսկվայի մասնաճյուղի պրոֆեսոր (1996-ից), թղթակից անդամ (1999-ից), ՀԽՍՀ վաստակավոր ճարտարապետ (1971 թ.) - **95-ամյակ**

**ՍԱՐՏԻՐՈՍ ԱԼԹՈՒՆՅԱՆ (1889-1958)**, ճարտարապետ, նկարիչ, Անթիլիասի Սբ. Գրիգոր Լուսավորիչ տաճարի (1940 թ.), Երուսաղեմի Սբ. Յոհաննես մատուռի (1946 թ.), Բաղդադի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1957 թ.) նախագծող, կառուցող - **130-ամյակ**

**ՌՈՋԱ (ՔՆԱՐԻԿ) ՊԵՏՐՈՍՅԱՆ (1924-2007)**, բանաստեղծուհի, արձակագիր, ԽՍՀՄ Գրողների միության անդամ (1973-ից) - **95-ամյակ**

## 22.09

**ՂԱՎԻԹ ՉԻՍԼՅԱՆ (ՉԻՍԼԻԵՎ) (22.09 (04.10) 1879-1970)**, ճարտարապետ, Թիֆլիսի քաղաքային վարչության գլխավոր ճարտարապետ (1912-ից), Թիֆլիսի պետկառույցների կոմիտեի փոխտնօրեն (1921-1926 թթ.), Լենինականի վերականգնման արվեստանոցի գլխավոր ճարտարապետ (1926-1934 թթ.), Սոչի-Մացեստա ճարտարապետական խմբի գլխավոր ճարտարապետ, փոխտնօրեն (1934-1941 թթ.) - **140-ամյակ**

**ՍԵՂՐԱԿ ՄԱՆՂԻՆՅԱՆ (1844-1915)**, մանկավարժ, դերասան, բեմադրիչ, հասարակական, գրական, մշակութային գործիչ, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի (1874-1878 թթ.) և Երևանի թեմական դպրոցների (1892-1895 թթ.) տեսուչ - **175-ամյակ**

### **23.09**

**ՀԱՍՄԻԿ ԼԵՅԼՈՅԱՆ (1954)**, քանոնահար, մանկավարժ, ՀՀ վաստակավոր (2003 թ.), ժողովրդական արտիստ (2013 թ.) - **65-ամյակ**

### **24.09**

**ԱԼԲԵՐՏ ԽԱՌԱՏՅԱՆ (1939)**, պատմաբան, բանասեր, մանկավարժ, «Լրաբեր հասարակական գիտական» հանդեսի գլխավոր խմբագիր (1988-ից), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ (2010 թ.) - **80-ամյակ**

**ԼԵՎՈՆ ԿՈՋՈՅԱՆ (1924-2015)**, գեղանկարիչ, մանկավարժ, ՀՀ վաստակավոր գործիչ (1980 թ.) - **95-ամյակ**

**ՍՏԵՓԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1944-2008)**, վիրաբույժ, ՀՀ վիրաբուժական ընկերակցության անդամ (1990 թ.), ՌԴ Բժշկատեխնիկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ (2000 թ.) - **75-ամյակ**

### **25.09**

**ԱՐԹՈՒՐ ԶԻԼԻՆԳԱՐՈՎ (1939)**, բևեռախույզ, Սովետական Միության հերոս (1986 թ.), ՌԴ հերոս (2008 թ.) - **80-ամյակ**

**ԱՐՇԱՎԻՐ ՂԱԶԱՐՅԱՆ (ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆ) (1914-1995)**, դերասան, դրամատուրգ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1955 թ.) - **105-ամյակ**

### **26.09**

**ԿՈՄԻՏԱՍ (ՍՈՂՈՄՈՆ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ) (1869-1935)**, երգահան, երաժշտագետ, երգիչ, բանահավաք, վարդապետ, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային դասական երաժշտության հիմնադիր - **150-ամյակ**

### **27.09**

**ԹՈՐԳՈՍ ԳՈՒՇԱՎՅԱՆ (ՄԿՐՏԻՉ ՊԻԼԻՃՅԱՆ) (1874-1939)**, բանասեր, թարգմանիչ, հոգևորական գործիչ, Երուսաղեմի հայոց պատրիարք (1931 թ.), «Սիոն» ամսագրի հիմնադիր - **145-ամյակ**

## 28.09

**ԲՐԻՋԻՏ ԱՆ-ՄԱՐԻ ԲԱՐՂՈ (1934)**, ֆրանսիացի կինոդերասանուհի, երգչուհի, ֆոտոմոդել - *85-ամյակ*

**ԳԱԲՐԻԵԼ ԱՐՈՒ (ԱՐՈՒԹ, ԱՐՈՒՏՉՅԱՆ, ԱՐՈՒՉԵԿ) (1909-1982)**, հայազգի ֆրանսիացի դրամատուրգ, ռեժիսոր, թարգմանիչ, Ֆրանսիական թատերական ակադեմիայի մրցանակակիր (1981 թ.) - *110-ամյակ*

**ԷՄԱՆՈՒԵԼ ԵՍԱՅԱՆ (1839-1907)**, դրամատուրգ, բանաստեղծ, մանկավարժ - *180-ամյակ*

**ՄԱՐՉԵԼՈ ՎԻՆՉԵՆՑՈ ԴՈՄԵՆԻԿՈ ՄԱՍՏՐՈՅԱՆԻ (1924-1996)**, իտալացի կինոդերասան, «Ոսկե գլոբուս»-ի կրկնակի մրցանակակիր, Բրիտանական կինոակադեմիայի, Կաննի փառատոնի մրցանակակիր - *95-ամյակ*

**ՆԱՅԱՊԵՏ ՌՈՒՄԻՆԵԱՆ (1819-1876)**, բանաստեղծ, մանկավարժ, ազգային-հասարակական գործիչ, թարգմանիչ, բժիշկ, երեսփոխան, Փարիզի «Այրարարատեան» ընկերության, Ազգային սահմանադրության հիմնադիրներից, Կ. Պոլսի կայսերական բժշկական ընկերության նախագահ (1858 թ.), Ազգային ժողովի երեսփոխան - *200-ամյակ*

**ՆԻԿՈԼԱՅ ՌԻՇԿՈՎ (1929)**, ռուս պետական, կուսակցական գործիչ, ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ (1985-1991 թթ.), Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման հանձնաժողովի նախագահ (2008 թ.), ՀՀ ազգային հերոս - *90-ամյակ*

**ՇԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (1934)**, արվեստաբան, Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն (1967-2004 թթ.), Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրեն (1991-2003 թթ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1984 թ.), Մշակույթի հայկական ֆոնդի փոխնախագահ (1987-ից) - *85-ամյակ*

## 30.09

**ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ (ԿԱՌԼԵՆ ՍՈՒՐԱԴՅԱՆ) (1919-1998)**, բանաս-

տեղծ, թարգմանիչ, «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի խմբագիր (1968-1972 թթ.) - *100-ամյակ*

### **31.09**

**ՍԵՎԱԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ (1959)**, գեղանկարիչ, Հայաստանի նկարիչների միության անդամ (1992-ից), ՅՈՒՆԵՍԿՕ-ի նկարիչների միջազգային միության անդամ (1995-ից) - *60-ամյակ*

## **ՅՈՎՏԵՄԲԵՐ**

### **1.10**

*Երաժշտության միջազգային օր*

**ՆԻԿՈԼԱՅ (ՆՈՐԱՅՐ) ԳԵՎՈՐԳՅԱՆ (1924-2011)**, դերասան, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1984 թ.) - *95-ամյակ*

**ՇԱՀԵՆ ԹԱԹԻԿՅԱՆ (1924-1992)**, արձակագիր, սցենարիստ, ՀՀ հեռուստառադիոպետկոմի «Երևան» կինոմիավորման տնօրեն, գլխավոր խմբագիր (1968-1971 թթ.), «Սովետական Հայաստան» ամսագրի գլխավոր խմբագիր (1977-1980 թթ.), ՀԽՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1985 թ.) - *95-ամյակ*

### **2.10**

**ԻՍԿՈՒՀԻ ՄԻՆԱՍ (ՄԻՆԱՍՅԱՆ) (1884-1951)**, գրող - *135-ամյակ*

**ԿԱՌԼԵՆ ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ (1929-1982)**, քանդակագործ, «Հայկ Նահապետ» քանդակի հեղինակ - *90-ամյակ*

**ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ (ՄՈՐԱՆԴԱՍ ԿՐԸՄՉՐԸՆԴ ԳԱՆԴԻ) (1869-1948)**, Հնդկաստանի քաղաքական, հոգևոր առաջնորդ, ազգային-ազատագրական շարժման ղեկավար, Հնդկաստանի՝ Մեծ Բրիտանիայից անկախանալու շարժման ղեկավարներից, գաղափարախոսներից - *150-ամյակ*

**ՄԻՔԱՅԵԼ ՊԱՏԿԱՆՅԱՆ (1814-1895)**, դրամատուրգ, թատերա-

կան գործիչ, թարգմանիչ, արևելահայ թատրոնի սկզբնավորողներից - *205-ամյակ*

### **3.10**

**ԳՐԻԳՈՐ ՄԿՐՏՉՅԱՆ (1924-2017)**, ռեժիսոր, բեմադրիչ, մանկավարժ, «Մետրո» թատրոնի հիմնադիրներից, Գյումրու Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի գլխավոր ռեժիսոր (1977-1982 թթ.), ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1956 թ.) - *95-ամյակ*

**ԷՂՈՒԱՐԴԱՍ ՄԵԾԵԼԱՅՏԻՍ (1919-1997)**, լիտվացի բանաստեղծ, թարգմանիչ, գրող, Լիտվայի գրողների միության քարտուղար (1954-1959 թթ.), քաղաքական, պետական գործիչ - *100-ամյակ*

**ՄԻԽԱՅԻԼ ԼԵՐՄՈՆՏՈՎ (03.10 (15.10) 1814-1841)**, ռուս բանաստեղծ, դրամատուրգ, արձակագիր, նկարիչ - *205-ամյակ*

### **4.10**

**ԱՆԴՐԱՆԻՎ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ (1909-1996)**, գրող, խմբագիր, «Նոր գիր» (1936 թ.), «Պայքար» (1963-1968 թթ.), «Նոր օր» (1970-ից) պարբերականների խմբագիր - *110-ամյակ*

**ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ (04.10 (27.10) 1904-1984)**, դերասան, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1954 թ.) - *115-ամյակ*

**ԺԱՆ ՖՐԱՆՍՈՒԱ ՄԻԼԼԵ (1814-1875)**, ֆրանսիացի գեղանկարիչ, բարբիզոնյան դպրոցի հիմնադիրներից - *205-ամյակ*

### **5.10**

*Ուսուցչի օր*

**ԳԵՈՐԳԻ ԱՂԱԲԱԼՅԱՆՑ (05.10 (18.10) 1904-1967)**, գինու քիմիայի և տեխնոլոգիայի բնագավառի գիտնական, ՌԽՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1964 թ.) - *115-ամյակ*

**ԴՈՆԱՏ ՍԱՐԿԻՍՈՎ (1924-2000)**, ախտաբան-անատոմ, ՌԴ ԲԳԱ սկադենիկոս (1996 թ.) - *95-ամյակ*



**ՍԱՍՈՒՆ ՊԱՍԿԵՎԻՉՅԱՆ (1939)**, երգահան, բանաստեղծ, Հայաստանի ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեի էստրադային-սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն (1977-1980 թթ.), Լոս-Անջելեսի «Հայաստան» հեռուստատեսության և մշակութային կենտրոնի հիմնադիր (1988-2004 թթ.), ՀՀ ժողովրդական արտիստ (2014 թ.) - *80-ամյակ*

## 6.10

**ԱՇՈՏ ՂՈՒԼՅԱՆ (ԲԵԿՈՐ ԱՇՈՏ) (1959-1992)**, Արցախյան ազատամարտի մասնակից, ՀՅԴ անդամ, Արցախի հերոս - *60-ամյակ*

**ԹՈՒՐ ՀԵՅԵՐՂԱԼ (1914-2002)**, նորվեգացի ճանապարհորդ, ազգագրագետ, հնագետ, գրող - *105-ամյակ*

**ՆԵԼԼԻ ԱՍԱՏՐՅԱՆ (1944)**, նկարչուհի, գրաֆիկ, գոբելենագործ - *75-ամյակ*

**ՆԵՐՍԵՍ ԳԱՍԱՊՅԱՆ (1904-1985)**, բանասեր, մատենագետ - *115-ամյակ*

**ՏԻԳՐԱՆ ՉՅՈԿՈՒՐՅԱՆ (1884-1915)**, գրող, հրապարակախոս, մանկավարժ, խմբագիր, նկարիչ, հասարակական գործիչ, «Ոստան» պարբերականի հիմնադիր (1911 թ.), Մեծ եղեռնի զոհ - *135-ամյակ*

## 7.10

*Գրադարանավարի օր*

**ԼԵՎՈՆ ՍՈՒԹԱՖՅԱՆ (1954-2015)**, թատերագետ, թատերագիր, Հայաստանի հեռուստառադիոպետկոմի խմբագիր, Հայաստանի գրողների միության անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ (2007 թ.) - *65-ամյակ*

## 8.10

**ԲՐԱՆԻՍԼԱՎ ՆՈՒՇԻՉ (08.10 (20.10) 1864-1938)**, սերբ գրող, հրապարակախոս, ազգագրագետ, պատմաբան, Սերբիայի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս - *155-ամյակ*

## 9.10

**ԹԱՍԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1954)**, դերասանուհի, ռեժիսոր, սցենարիստ, մանկավարժ, «Միեր Մկրտչյան» արտիստական թատրոնի համահիմնադիր (1988 թ.), տնօրեն, գեղարվեստական ղեկավար (1994-1996 թթ.), Նյու Յորքի «Թեքեյան» մշակութային միությանը կից «Միեր Մկրտչյան» թատերախմբի հիմնադիր-ղեկավար (1997-2002 թթ.) - *65-ամյակ*

## 10.10

**ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՍԼԱՆՈՎ (ԱՍԼԱՆՅԱՆ) (1874-1960)**, դիրիժոր, երգահան, Բաքվի սիմֆոնիկ նվագախմբի հիմնադիր (1908 թ.), Ս. Պետերբուրգի Մարիինյան թատրոնի նվագախմբի ղեկավար (1912-1918 թթ.) - *145-ամյակ*

**ԱՐՇԱԿԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (1929-1987)**, երգիչ (բարիտոն), ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1967 թ.) - *90-ամյակ*

**ԳՐԻԳՈՐ ԱՂԱԽԱՆՅԱՆ (1904-1986)**, ճարտարագետ, ՀԽՍՀ ջրային տնտեսության մինիստր (1940-1953 թթ.), ՀԽՍՀ վաստակավոր ջրաշինարար (1957 թ.) - *115-ամյակ*

**ԷՂՎԱՐԴ ՀԱՍԲԱՐՉՈՒՄՅԱՆ (1909-1978)**, դերասան, մանկավարժ, Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնի տնօրեն, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ (1950 թ.) - *110-ամյակ*

**ՀԱՅԿԱԶ ԺԱՄԿՈՉՅԱՆ (1909-1981)**, պատմաբան, մանկավարժ, ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան (1945-1955 թթ.), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1970 թ.) - *110-ամյակ*

**ՀՐԱՉՅԱ ՔԱՐԱՄՅԱՆ (10.10 (23.10) 1909-1986)**, մանկավարժ, ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ (1961 թ.) - *110-ամյակ*

